Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

355.4
Բ-11

Բ Գ Կ Բ

# ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ
1931

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

355.4
Ի-11
1 MAR 2010

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»
ԽՍՀՄ ռազմական ու ծովա-
յին գործերի ժողովրդական
Կոմիսար յեվ ՀՌԽ Նախագահ՝ ՎՈՐՈՇԻԼՈՎ
27 հունիսի 1931 թ.

# ԲԴԿԲ
# ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
# ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁ. ԴԻՎՔԱՂԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1931 թ

11 SEP 2013

11.613

# УСТАВ
# КАРАУЛЬНОЙ СЛУЖБЫ
# РККА

Պետհրատի Տպարան
Գլավլիտ 6901 բ)
Պատվեր № 5204
Տիրաժ 3500

10468-57

## ՀՐԱՄԱՆ

ԽՍՀՄ Հեղափոխական Ռազմական Խորհրդի
27-ն հունիսի 1931 թ.
ք. Մոսկվա

1. *Գործադրության մեջ մտցնել* 1931 *թվի սեպտեմբերի* 1-*ից Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի Պահակային Ծառայության կանոնագիրքը՝* 1931 *թվի հրատարակությամբ:*

2. *Պահանջում եմ հրամատարներից ու մարտիկներից գործնական աշխատանքում.*

*ա) բարեխղճորեն ուսումնասիրել և պարզ հասկանալ պահակային ծառայության կանոնագիրքը, վորպես կարևորագույն կանոնագրքերից մեկը.*

*բ) ճիշտ կատարել կանոնագրքային բոլոր կանոնները, հիշելով, վոր նրանց յուրաքանչյուր խախտումը, չկատարումը կամ զանցառումը պատճառ ե լինում Խորհրդային պետության պաշտպան կանգնած Կարմիր բանակի կռվի թուլացման:*

3. 1924–1927 *թ.թ. հրատարակության կայազորային ծառայության ժամանակավոր կանոնա-*

*դիրքը, ինչպես նաև ԽՍՀՄ ՀՌԽ 1925 թ. № 27, 978 և 1099-և Ռազմ-ծով. ժողկոմատի 1924 թ. № 124 և 1925 թվի № 54 շրջաբերականները վերացնել:*

*ԽՍՀՄ Ռազմական ու ծովային գործերի ժողովրդական կոմիսար ու ՀՌԽ նախագահ՝*

ՎՈՐՈՇԻԼՈՎ.

*(Ըստ ԲԳԿԲ Գլխավոր Վարչության)*

---

ԳԼՈՒԽ I

## 1. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

### 1. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է.

*ա) Պահպանելու և պաշտպանելու համար պետական գույքը, պահեստները, կառուցվածքներն ու հիմնարկները.*

*բ) պահպանելու համար կալանքի տակ պահվող անձանց.*

*գ) պահպանելու համար հասարակական կարգը տարերային աղետների ժամանակ:*

2. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼԸ ԹԵ՛ ԽԱՂԱՂ ՅԵՎ ԹԵ՛ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ Է: Վորպես յուրաքանչյուր մարտական խնդիր, պահակային ծառայությունը պահանջում է առավելագույն ուշադրություն դեպի այն, նրա բարեխիղճ ու գիտակից կատարում թե՛ առանձին մարտիկների ու հրամանատարների և թե՛ ԲԳԿԲ զորամասերի կողմից:

3. Սույն կանոնագրքով վորոշվում է կայազորային և զորական մասերի ներքին պահակների ծառայությունը: Կայազորային պահակները պահպանում են կայազորային նշանակություն ունեցող օբյեկտներ, զորամասերի ներքին պահակները ծառայությունը կրում են իրենց զորամասի ներսում:

## 2. ՎԵՐԱԿԱՐԳ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4. Պահակային ծառայության վերակարգը և կայազորում պահպանության օբյեկտների բաշխումը զորամասերի միջև վորոշվում է պահակային վերակարգի ցուցակով (հավելված 1-ին), վորը թե՛ խաղաղ և թե՛ պատերազմի ժամանակ կազմում է կայազորի պետը և հաստատում է շրջանի (բանակի) զորքերի հրամատարը: Պահակային վերակարգի ցուցակը զորամասերի ներքին պահակների համար կազմում է զորամասի հրամատարը և հաստատում է կայազորի պետը:

Պոստերի ցուցակը (հավելված № 2) կայազորային պահակների համար կազմում է քաղաքի պարետը, իսկ վորտեղ այդպիսին չկա, ինչպես նաև այն դեպքերում, յերբ օբյեկտները չարունակ պահպանվում են տեղական հրաձիգ զորքերով,



պոստերի ցուցակները կազմում է զորամասի հրամատարը և հաստատում է կայազորի պետը: Ներքին պահակների համար պոստերի ցուցակը կազմում է զորամասի շտաբի պետը և հաստատում է զորամասի հրամատարը:

Կայազորային ու ներքին վերակարգերի պոստերի քանակի յուրաքանչյուր փոփոխում կատարվում է այն պետի թույլտվությամբ, վորը հաստատել է պահակային վերակարգի ցուցակը, իսկ այնպիսի դեպքերում, յերբ հապաղումն անհնար է, այդպիսի փոփոխումը կարող է կատարվել կայազորի պետի կամ զորամասի հրամատարի կողմից, բայց անմիջապես զեկուցելով փոփոխման պատճառների մասին այն պետին, վորը հաստատել է պահակային վերակարգի ցուցակը:

Պահակային վերակարգի ցուցակը, պոստերի ցուցակը և պահակի հատուկ պարտականությունների հրահանգը պետք է գտնվեն ուսումնասիրության համար յուրաքանչյուր այն զորական մասում, վորը կայազորում կրում է պահակային ծառայություն:

5. Կայազորի պետը պատասխանատվություն է կրում կայազորային պահակների կանոնավոր պահպանության և նրանց կողմից պահակային ծառայության ճիշտ կատարման համար, իրագործե-

ըով նրա նկատմամբ վերահսկողությունն անձամբ, պարետի, կայազորի պահակների որապահի ու սրա օգնականի միջոցով։

Պահակային վերակարգի ժամանակին ու կանոնավոր կատարման համար պատասխանատվությունն ընկնում է զորական մասերի հրամատարների վրա։

## 3. ՆՇԱՆԱԲԱՆ ՈՒ ԱՆՑԱԲԱՆ

6. ՆՇԱՆԱԲԱՆԸ (ՊԱՐՈԼԸ) ԳԱՂՏՆԻ ԲԱՌ Է, ՎՈՐԸ ԾԱՌԱՅՈՒՄ Է ԿԱՅԱԶՈՐԻ ՊԱՀԱԿՆԵՐԻ (ԶՈՐԱՄԱՍԻ) ՈՐԱՊԱՀԻ, ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ ՈՒ ՊԱՀԱԿՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԱՄԱՐ, ՎՈՐՊԵՍ ՄԻ ՄԻՋՈՑ ՀԱՎԱՍՏԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԹԵ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱՄ ՊԱՀԱԿՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՑԵԿԱԾ ԱՆՁՆ ԻՐՈՔ ԼԻԱԶՈՐՎԱԾ Է ԱՎԱԳ ՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ։

Բացի դրանից, նշանաբանով վավերացվում է պահակը փոխելու համար յեկած վերակարգի իսկությունը։

4. Նշանաբանը վորևե քաղաքի անունով է յեվ նշանակվում է կայազորի պետի կողմից յուրաքանչյուր որ կայազորի (կայազորային ու ներքին) բոլոր պահակների համար։ Մեծ կայազորներում սահմանվում է առանձին ռայոնների համար իրենց նշանաբանը։



8. Յուրաքանչյուր զորամաս վերակարգը կատարելու նախօրեյին պետք է ստանա կայազորի պետից նշանաբանը (հին ու նոր) առանձին ծրարի մեջ, զորամասի հրամատարի անունով, գաղտնի կարգով։

9. Զորամասի հրամատարը, կամ նրա հանձնարարությամբ շտաբի պետը, պահակները փոխելուց 2 ժամ առաջ, հանձնում է գրություն հին ու նոր նշանաբաններով կայազորի պահակների նոր նշանակված որապահին ու զորամասի որապահին։

10. Բոլոր դեպքերում հարցումների ժամանակ նշանաբանը հայտնվում է վոչ թե ձայնով այլ գրությամբ, վորպեսի գրությունն անմիջապես վոչնչացվում է։ Նշանաբանի հրապարակումը հանդիսանում է ռազմական գաղտնիքի հրապարակում։

11. Նշանաբանով գրությունը կորցնելու և նշանաբանի հրապարակման այլ դեպքերում նրա գործողությունն անմիջապես դադարեցվում է։

Դադարեցնելով նշանաբանի գործողությունը ստորադաս պահակների (պահակի) համար, պահակների որապահը, զորամասի որապահը կամ պահակապետն անմիջապես զեկուցում են այդ մասին վերադասության կարգով։ Կայազորի պե-

տը կամ նրա հանձնարարությամբ պարետը դադարեցնում է նշանաբանի գործողությունը կայազորի բոլոր պահակների համար կամ մի ռայոնի պահակների համար (մեծ կայազորներում), սահմանում է և ուղարկում պահակներին նոր նշանաբան:

12. Մի քանի պոստերում կայազորի պետի կամ զորամասի հրամանատարի (ներքին պահակների համար) կարգադրությամբ սահմանվում են գրավոր անցագրեր (պրոպուսկ) այն անձանց համար, վորոնց ժամապահը պետք է բաց թողնի:

Այն պոստերում, վորտեղ սահմանվում են գրավոր անցագրեր, պետք է կախված լինեն նրանց նմուշները:

## Գլուխ II

## 1. ԿԱՅԱԶՈՐԻ ՊԱՀԱԿՆԵՐԻ ՈՐԱՊԱՀՆ ՈՒ ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԸ

### Ա. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. ԿԱՅԱԶՈՐԻ ՊԱՀԱԿՆԵՐԻ ՈՐԱՊԱՀՆ ՈՒ ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԸ

13. Պահակների կողմից իրենց պարտականությունների կանոնավոր ու ճիշտ կատարումը ստուգելու համար՝ կայազորում նշանակվում է կայազորի պահակների որապահ ավագ ու միջին հրամանատարական ու հրամ-քաղաքական կազմի անձերից, իսկ մեծ կազմով պահակներ ունեցող պահակներում նրան ոգնելու համար նշանակվում է ոգնական՝ զորքերի բոլոր տեսակների, բացի ռազմակրթական հիմնարկների, միջին հրամանատարական ու հրամ-քաղաքական անձերից:



Ծանոթություն. Պահակների փոքր կազմով, վոչ ավելի քան 2–3 (յուրաքանչյուրում մեկից մինչև յերեք պոստով), փոքր կայազորներում, կայազորի պահակների որապահ չի նշանակվում: Այդպիսի դեպքերում պահակների ստուգումը կայազորի պետը հանձնարարում է այն զորամասի որապահին, վորից արված է պահակային վերակարգը, իսկ տեղական հրաձգային զորամասերում նրանց հրամանատարներին:

14. Կայազորի պահակների որապահն անմիջորեն յենթարկվում է պարետին ու կայազորի պետին: Այդ անձանց անունից ուրիշ անձերի միջոցով նրանց տրվող հրամանները պետք է վավերացվեն նշանաբանի հաղորդումով: Նրան յենթարկվում են բոլոր կայազորային պահակները:

### 15. ԿԱՅԱԶՈՐԻ ՊԱՀԱԿՆԵՐԻ ՈՐԱՊԱՀԸ

1) գտնվում է պահակներից մեկն ու մեկում, վորն ամենից կարևոր նշանակություն ունի, կամ

այն տեղում, որը սահմանվում է կայազորի պետի հրամանով: Պահակների ցրված դասավորության ժամանակ կայազորի պահակների որապահն ու նրա օգնականը պետք է գտնվեն տարբեր ռայոններում և նրանց միջև պետք է ապահովված լինի տեխնիկական կապը:

2) Կայազորի պահակներից մեկում կարևոր պատահարի դեպքում (հարձակում, հրդեհ) միջոցներ է ձեռք առնում ուժեղացնելու համար մնացած պահակների մարտական պատրաստությունը, ժամանում է պատահարի վայրն ինքը կամ ուղարկում է իր օգնականին, կանչում է, յեթե անհրաժեշտ է համաձայն պարագայի, որապահ մասին, ապահովելով պատահարի ամենաարագ վերացումը. դրա հետ միասին հատուկ ուշադրություն է դարձնում, վորպեսզի պահպանվի պահակային ծառայության սահմանված կենտրոնացված ղեկավարությունը:

3) Ղեկավարում է պահակային գործողությունը՝ յետ մղելու համար հարձակումը և հրդեհի ժամանակ համաձայն օբյեկտի պաշտպանության պլանի:

4. ՆԱ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

ա) գիտենալ կայազորային նշանակություն ունեցող կարևորագույն պահակների պահպանության բնույթն ու պաշտպանության պլանը:



բ) Հսկել պահակային ծառայության ճիշտ և կանոնավոր կատարման վրա կայազորային պահակներում, զննելով ու ստուգելով պահակներն անձամբ և իր օգնականի միջոցով:

գ) Պահակային ծառայության ստուգման հետ միաժամանակ ստուգել կապի, նշանաբարային միջոցները, պահակների հակօդային ու հակաքիմիական պաշտպանության պատրաստականությունը, միջոցներ ձեռք առնելով անմիջապես վերացնելու բոլոր անսարքինություններն ու թերությունները:

դ) Զեկուցել կայազորի պետին ու պարետին բոլոր պատահարների ու ձեռք առած միջոցների մասին:

16. Կայազորի պահակների որապահին թույլատրվում է պարտականությունների կատարումից ազատ ժամանակ, իսկ յեթե կա օգնական, փոխեփոխ նրա հետ, հանգստանալ պառկած (քնել) առանց հանվելու, արձակելով վզնոցի կոճակները և առանց հանելու հանդերձանքը:

17. Պահակները փոխելուց հետո կայազորի պահակների յերկու որապահն էլ ներկայանում են զեկուցումով կայազորի պետին (մեծ քաղաքներում՝ պարետին):

18. Կայազորի պահակների որապահի օգնա-

կանը հանդիսանում է կայազորի պահակների օրապահի հրամանների անմիջական կատարողը, վորին և անմիջորեն յենթարկվում է։

## Բ. ՊԱՀԱԿ

### 1. ՊԱՀԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

19. ՊԱՀԱԿ ԿՈՉՎՈՒՄ Ե ԶԻՆՎԱԾ ԽՈՒՄԲԸ, ՎՈՐԸ ԿԱՐԳՎՈՒՄ Ե ՄԻ ՎՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ, ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՊԱՀՊԱՆԵԼ ՈՒ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ–ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՅԵՎ ԱՅԼ ՈԲՅԵԿՏՆԵՐ, ՊԱՀՊԱՆԵԼ ԱՆՁԱՆՑ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ։

*Բացի դրանից, բոլոր պահակների պարտականությունն է պահպանել հասարակական անվտանգությունն իրենց գտնված վայրի մոտերքում։*

20. ՊԱՀԱԿՆԵՐԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ

*ա) Կայազորային պահակների, վորոնք կրում են կայազորային նշանակություն ունեցող օբյեկտների պահպանության ծառայություն, և*

*բ) ներքին պահակների, վորոնք ծառայությունը կրում են զորամասի ներսում․*

*և նայած պահպանման կարգին՝*

*ա) մշտական պահակների, վորոնք ծառայությունը կրում են համաձայն պահակային վերակարգի ցուցակի, և*



*բ) ժամանակավոր պահակների, վորոնք ուղարկվում են կայազորի պետի կարգադրությամբ իսկ զորամասերում՝ զորամասի հրամանատարի կարգադրությամբ։*

Ծանոթություն․ *աերոդրոմներում պահակները բոլոր դեպքերում էլ հանդիսանում են կայազորային պահակներ։*

21. ՊԱՀԱԿԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ԵՆ

*ա) Պահակապետը․*

*բ) պահակապետի օգնականը (յերբ պահակում կա 5 որական յեռափոխ պոստերից ավելի, կամ յերբ կան 7-ից ավելի խառը կազմի պոստ— որական ու գիշերային պոստեր)․*

*գ) փոխադիրներ (պահակի ջոկերի հրամատարներ)․*

*դ) պահակապաններ— պոստերի վրա ժամապահներ կարգելու համար։*

*Կալանավորների մոտ պոստ ունեցող պահակում նշանակվում են ուղեկցողներ, հաշվելով 1 ուղեկցող 15 կալանավորի համար, ուղեկցելու համար կալանավորներին նրանց պահպանության վայրի սահմաններում։*

*Կարևոր օբյեկտների պահպանության ժամանակ (հրապաշարային ու պայթուցիկ նյութերի պահեստներ, կամուրջներ, աերոդրոմներ, ավիա-*

*բաղանքը), երբ նրանք գտնվում են հնարավոր հարձակման շրջանում, կայազորի պետի կամ պահպանող զորամասի հրամանատարի կարգադրությամբ պահակի կազմն ուժեղացվում է, ուղարկելով պահապան մասից մարտիկներ, լրացուցիչ պոստեր կարգելու և դետքեր ուղարկելու համար (գիշերով, մառախուղին, բքին), որի մասին պետք է բացատրված լինի պահակապետի հրահանգում:*

Ծանոթություն. 1. *Փոխադրիչների թիվը պահակում յուրաքանչյուր առանձին դեպքում որոշվում է պոստերի քանակով ու դասավորությամբ: Պահակի կազմի մեջ փոխադրիչներ նշանակելիս պետք է ելնել նրանից, որ յուրաքանչյուր փոխադրիչ իրեն հանձնարարած պահպանության սեկտորում փոխի, որպես կանոն, 5 ժամապահից ոչ ավելի:*

2. *Պահակում մի քանի փոխադրիչ նշանակելիս նրանք անվանվում են ըստ կարգի համարներով՝ 1-ին, 2-րդ և այլն:*

3. *Մեկ պոստից բաղկացած պահակում փոխադրիչ չի նշանակվում, նրա պարտավորությունները կատարում է պահակապետը:*

22. Ժամապահներով պահպանության վորպես լրացում, բարձրացնելու համար պահպանության հուսալիությունը և կրճատելու համար վեբակարգը, պահեստների աերոդրոմների, պոլիգոնների և այլոց մշտական պահպանության համար գործադրվում են պահակային շներ (*պահակաշներ*):

23. *Պահակային շները մտնում են տվյալ օբյեկտի պահպանությունը կրող պահպանող մասի կազմի ու պահակի համրանքի մեջ:*

*Պահակային շների ստորաբաժանման ավագ հրամանատարը կամ ավագ շնապանը հանդիսանում է պահակապետի մասնագիտական ծառայության օգնականը:*

## 2. ՊԱՀԱԿՆԵՐԻ ԶԻՆԱՎՈՐՈՒՄԸ

24. ՊԱՀԱԿԻ ԿԱԶՄԸ ՊԵՏՔ Է ԶԻՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՆԶԱՄԲ ԻՐԵՆ ՀԱՍՏԿԱՑՐԱԾ ԶԵՆՔՈՎ (ՀՐԱՑԱՆ, ԱՏՐՃԱՆԱԿ): *Անհրաժեշտ դեպքում պահակի մեջ մտցվում են ձեռքի գնդացրերի ջոկեր: Պահակային շների ստորաբաժանումների անձնական կազմը զինվում է ատրճանակներով:*

*Բացի դրանից,* ամբողջ պահակային վերակարգը պետք է իր հետ ունենա հակագազեր ու անհատական ծրարներ:

25. Պահակի կազմից յուրաքանչյուրը պետք





10468-Ր 2044

Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна

*է ունենա. հրացանով զինվածը՝ 15 հատ մարտական փամփուշտ, ավտոմատիկ գործողության ատրճանակով՝ յերկու պահունակ, «Նագան» սիստեմի ատրճանակով զինվածը՝ 14 փամփուշտ. ձեռքի գնդացրի համար ունենալ 2 սկավառակ:*

*Պահակատանը կայազորային պահակներում կայազորի պետի կարգադրությամբ գոյացվում է մարտամթերքի պաշար հետևյալ հաշվով. յուրաքանչյուր հրացանի համար 45 փամփուշտ և ձեռքի գնդացրի համար ունենալ 2 սկավառակ, վորոնք պահվում են ծրարներով, կնքված արկղում և օգտագործվում են անհրաժեշտության դեպքերում պահակապետի հայեցողությամբ:*

26. ՀՐԱՑԱՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԼՑՎԱԾ ՊՈՍՏՈՒՄ, ԴԵՏՔՈՒՄ, ԳԱՂՈՆՔՈՒՄ, ՈՒՂԵԿՑՈՂԻ, ԿԱՄ ՈՒՂԵԿՑԱՎՈՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՊԱՀԱԿԸ ՍՏՈՒԳՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՂԵԿՑԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼՑՎԱԾ ԼԻՆԵՆ ՊԱՀԱԿՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԱՄԲՈՂՋ ԺԱՄԱՆԱԿ:

*Վերոհիշյալ բոլոր դեպքերում հրացանը լցվում է պահակատանը, այնտեղից դուրս գալուց առաջ և լցահանվում է նույնպես պահակատանը: Ընդ սմին հրացանը լցվում է 4 փամփուշտով, վորոնք ընկղմվում են զատիչ անդրադարձիկի զատիչ*



*ատամի տակ, զգուշությամբ իջեցվում է հրահանը: Գնդացիրը լցվում է պոստում գործադրության մոմենտին:*

*Պահակապետը, նրա օգնականը և փոխադիրները լցնում են իրենց զենքն ամենից առաջ: Պահակայանները լցնում ու լցահանում են իրենց զենքը հրամանով և փոխադրի կամ պահակապետի օգնականի անմիջական հսկողության տակ:*

27. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԶԵՆՔՆ ՈՒ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԳՏՆՎԵՆ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՍԱՐՔԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԶԻԳ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՊԱՏՐԱՍՏ:

Ծանոթություն: *Փոխվելուց հետո պոստից, գաղոնքից, դետքից կամ ուղեկցելուց վերադարձած պահակայինները, լցահանելով զենքը, սրբում են այն պահակապետի օգնականի կամ փոխադիրների հսկողությամբ:*

## 3. ՊԱՀԱԿՆԵՐԻ ՍՏՈՐԱԴԱՍՈՒՄԸ

28. Պահակները յենթարկվում են կայազորի պահակների որապահին, նրա օգնականին, պարետին (վորտեղ այդպիսին կա) և կայազորի պետին, իսկ ներքին պահակները՝ զորամասի որապահին ու զորամասի հրամատարին:

29. Զորամասի օրապահի (ներքին պահակների համար), պահակների օրապահի, պարետի ու կայազորի պետի ստորադասության տակ պահակների անցումը վորոշվում է այն մոմենտով, յերբ պահակապետին հանձնվում է նշանաբանը:

Այդպիսի ստորադասությունից կրկին դուրս գալը վորոշվում է այն մոմենտով, յերբ փոխվող պահակին տրվում է «մարշ» հրամանն իրենց զորամասը մեկնելու համար:

30. Պահակային ծառայության պարտականությունների կատարման ժամանակ պահակի կազմը կարգապահական տույժերի չի յենթարկվում: Կարևոր զանցանք կամ հանցանք գործելու դեպքում հանցավորն անմիջապես փոխվում է: Սակավ կարևոր զանցանքների համար տույժերը տրվում են պահակի փոխվելուց հետո:

## 4. ՊԱՀԱԿՆԵՐԻ ՓՈԽԵԼԸ

31. Պահակը չպետք է մնա առանց փոխվելու մի օր ու գիշերից ավելի:

32. Կայազորային պահակների փոխվելու համար ժամանակը սահմանում է կայազորի պետը, իսկ ներքին պահակների համար՝ զորամասի հրամատարը:

33. Զորական մասի հրամատարը, իսկ զո-



րամասերում ստորաբաժանումների այն հրամատարները, վորոնք ստացել են ավագ պետի հրամանը վերակարգի մասին, անում են բոլոր անհրաժեշտ կարգադրությունները պահակների փոխելու նախորեյին՝ պահակի մեջ նշանակելու, պահակների համրանքի և պահակների կազմի հրահանգման մասին:

34. Փոխելուց 2 ժամ առաջ պահակների կազմը հավաքվում է իրենց ստորաբաժանումներում, մի վորոշ տեղ, վորտեղ յուրաքանչյուր պահակապետ կատարում է իր պահակի համրանքը ներքեվում հիշվածի համեմատ:

1) Յուրաքանչյուր պահակ բաժանվում է ըստ ջոկերի համաձայն նրա կազմի մեջ նշանակված փոխադիրների թվի, վորոնք (փոխադիրները) դառնում են ջոկերի հրամատարները:

2) Պահակապանների թիվը ջոկերում լինում է փոխադրին յենթակա պոստերի թվի համեմատ (պոստերի ցուցակով) համաձայն 69–70 հոդվածների համրանքի:

3) Ուղեկցավորները (կոնվոիրը) և ուղեկցողները (վորտեղ նշանակված են) բաշխվում են ջոկերի միջև և կանգնում են այն ջոկերի ձախ թեվում, վորոնց սեկտորում նրանք պետք է օգտագործվեն:

Պահակի շարումն ու նրա շարժումը կատար-

վում է համաձայն Հետ․ Մարտ․ Կանոնադրքի մաս I հոդ․ հոդ․ 222-ի, 118-135-ի։

Համրանքից հետո պահակի ամբողջ կազմը մըտցվում է պոստային տեղեկագրի մեջ (հավելված № 4), այնուհետև ստուգվում է պարտականությունների յուրացումը (գործնական յեղանակով, օրինակների միջոցով), ստուգվում է զենքի հակագազերի, հանդերձանքի սարքինությունը, վորից հետո պահակներին արձակում են ճաշելու և նկատված թերությունները վերացնելու։

35․ Զորամասի ամբողջ որական վերտակարգի հավաքի մոմենտին, պահակները լրիվ պատրաստականությամբ հավաքվում են, ոդային քողարկման հաշվառումով, ընդհանուր հավաքի վայրը և անցնում են զորամասի որապահի տրամադրության տակ, վորը կատարում է պահակի կազմի պարտականությունների ընդունումն ու ստուգումն, կանչում է իր մոտ պահակապետերին, հանձնում է նրանց նշանաբանը, տալիս է անհրաժեշտ ցուցումներ առաջիկա խնդրի մասին՝ համաձայն Հետ․ Մարտ․ Կան․ մաս I․ 7-րդ հոդվածի և ուղարկում է պահակներին դեպի պահպանության օբյեկտները։

36․ Հասնելով հին պահակի դասավորության վայրը, նոր պահակապետը կանգնեցնում է իր պահակին պահակատան մուտքի առաջ, մտնում է պա-



հակատունը, ներկայանում է հին պահակապետին և գրությամբ հաղորդում է նրան հին նշանաբանը։

37․ Հաղորդած նշանաբանի ճշտության դեպքում հին պահակապետը շարում է իր պահակին, դուրս է բերում նրան և կանգնեցնում է պահակատան մոտ։ Դրանից հետո նոր պահակապետը ստանում է իր պահակին պահակատունը։

Ծանոթություն․ 12 աստիճանից ավելի (Ցելսիուսով) սառնամանիքի ժամանակ և վատ յեղանակին հին պահակը դուրս չի բերվում պահակատնից մինչև փոխելն ավարտելը։

38․ Պահակների փոխելու համար փոխադիրները (ջոկհրամատարները) պահակապետի հրամանով կատարում են յուրաքանչյուր պոստի (ըստ ցուցակի) և կնիքների դրոշմվածքների (ըստ ցուցակի) բանավոր ընդունումն ու հանձնումը։ Պահակապետները հսկում են ընդունելու ու հանձնելու ճշտության վրա։

39․ Պոստերի բանավոր հանձնումն ավարտելուց հետո նոր պահակապետը կանչում է պահակապանների առաջին հերթափոխին և հիշեցնելով իրենց պարտականությունների մասին, իսկ փոխադիրներին հիշեցնելով պոստերի ընդունելու-

թյան վրա ուշադիր հսկողության անհրաժեշտության մասին, հերթափոխին ուղարկում է պոստերը:

Հին պահակապետը նոր պահակի առաջին հերթափոխի հետ միաժամանակ ուղարկում է իր փոխադիրներին ժամապահների փոխելը կատարելու համար:

> Ծանոթություն. պահակայինների շարումն ու շարժումը փոխելու ու վերադառնալու համար կատարվում է Հետ. Մարտ. Կան. 1-ին մասի 91-րդ–98-րդ հոդ. համաձայն:

40. Ժամապահներին նոր, դրանից առաջ չզբաղեցրած, պոստերի վրա կարգելը, ինչպես նաև ժամապահներին պոստերից բոլորովին հեռացնելը կատարում են փոխադիրները՝ պահակապետի կամ նրա օգնականի ներկայությամբ:

Պահեստարանի թույլտուքի ժամանակ (հոդված 58) ժամապահների հեռացումն ու կարգումը, ինչպես նաև գիշերային պոստերում համաձայն՝ պոստացուցակի ցուցումների ու 59 և 60-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանությամբ, կատարում են փոխադիրները պահակապետի հրամանով: Ժամապահների հեռացման ու կարգման այդ բոլոր դեպքերի մասին նշվում է պոստային տեղեկագրում:



41. Պոստերն ուղարկելով առաջին հերթափոխին, նոր պահակապետն ընդունում է հին պահակապետից.

1) պոստացուցակը, պահակապետի հրահանգը և այլ փաստաթղթերը.

2) մարտամթերքների յեղած պաշարը.

3) տեխնիկական կապի և նշանարարության միջոցները.

4) պահակատունը՝ մեջը գտնվող ինվենտարով՝ համաձայն ցուցակի (հավելված 6).

5) կալանավորների մատյանը և կալանավորներին իրենց:

> Ծանոթություն. «2», «3» և «4» կետերում հիշատակվածներն ընդունում է պահակապետի օգնականը (վորտեղ այդպիսին կա պահակի կազմի մեջ):

42. Ժամապահների փոխելու մասին փոխադիրների զեկուցումներից հետո յերկու պահակապետերը ստորագրում են հին պահակապետի պոստային տեղեկագիրը, վորի մեջ նոր պահակապետը մտցնում է պահակը փոխելու միջոցին նկատած բոլոր անսարքությունների մասին դիտողությունները և փոխելու մասին զեկուցում է պահակների (զորամասի) օրապահին:

Այդ ավարտելուց հետո հին պահակապետը

տուն է տանում իր պահակին հետ. Մարտ. կան. 1-մասի սահմանած կարգով:

43. Յերբ պահակների փոխելու ժամանակ ժամանում են այն անձինք, վորոնց յենթարկվում են պահակները, կամ վորոնց իրավունք է վերապահված նրանց ստուգելու, ամենից առաջ նկատած պահակապետը կամ ոգնականը «զգաստ» հրաման է տալիս, յերկու պահակապետերը, սկսած հին պահակապետից, զեկուցում են տեղի ունեցող փոխորդի մասին:

## 5. ԿԱՐԳԸ ՊԱՀԱԿԱՏԱՆԸ

44. ՎՈՉ ՎՈՔ ՊԱՀԱԿԻ ԿԱԶՄԻՑ ՉԻ ԿԱՐՈՂ ԹՈՂՆԵԼ ՊԱՀԱԿԱՏՈՒՆԸ, ԱՌԱՆՑ ՊԱՀԱԿԱՊԵՏԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ, վորը կարող է թույլատրել հեռանալ պահակատնից միայն պահակային ծառայությունը կրելու հետ կապված պաշտոնական հանձնարարության կատարման համար:

45. ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՀԱՆԳՍՏԱՆԱԼ ՊԱՌԿԱԾ (ՔՆԵԼ) ՈՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ.

ա) Յեռափոխ պոստերի այն պահակայինների հերթափոխին, վորը փոխվել է պոստից՝ մինչև վոր հերթական փոխը պոստերը կգնա.

բ) պահակի մնացած ամբողջ կազմին պարտականությունների կատարումից ազատ ժամա-



նակամիջոցում պահակապետի կամ նրա ոգնականի թույլտվությամբ:

Պահակապետին թույլատրվում է հանգստանալ ցերեկը, փոխեփոխ իր ոգնականի հետ. իսկ վերակարգում վերջինիս բացակայության դեպքում՝ փոխադիրների հետ:

46. ՊԱՀԱԿԱՏՆՈՒՄ ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆՎԻ ՀԱՆԴԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՐԳ: Յերգն ու յերաժշտական գործիքների վրա նվագն արգելվում է:

Թույլատրվում է գրքերի ու թերթերի ընթերցում, շախմատի, շաշկիի, դոմինոյի խաղեր և ռադիոհեռախոսի ոգտագործում:

Ծխելը թույլատրվում է միայն դրա համար հատկացված շենքերում:

Պահակի ամբողջ կազմը պետք է ամբողջ ժամանակ գտնվի սահմանված հագուստեղենով ու հանդերձանքով (համաձայն «Համազգեստի ձևի մասին կանոնադրության»): Գլխարկներն ազատ ժամանակ կարող են հանել: Ձմեռը հանգստացող հերթափոխին թույլատրվում է հանել գրատները (շինելները), տեղափոխելով հանդերձանքը վերնաշապկի վրա. պահակապետին պահակատանը գրատը հանել թույլատրվում է միայն ցերեկով:

47. Պահակատունը, պոստերն ու կալանավոր

ների շենքը մթնշաղից մինչև արշալույս պետք է լուսավորվեն։

48. Պահակետների ու պոստերի սարքավորումը (հավելված № 5) և նրանց սարքինության ու պահպանության հսկողությունը, ինչպես նաև պահակատան կապի ու նշանարարության կառուցումը պոստերի ու պահակների (զորամասի) օրապահի հետ դրվում է կայազորային պահակների նկատմամբ՝ պահպանվող օբյեկտի պետի վրա, ներքին պահակների նկատմամբ՝ զորամասի հրամանատարի վրա (կայազորային պահանոցի նկատմամբ՝ պարետի վրա)։

49. Յուրաքանչյուր պահակատանը պետք է լինի կամավարձ պահապան (ստորոժ), որը նշանակվում է պահպանության օբյեկտի (պահեստի, հիմնարկի ու ձեռնարկության) պետի կարգադրությամբ։

Պահապանը գտնվում է պահակապետի իրավասության տակ։ Նա պարտավոր է՝ մաքուր ու սարքին պահել պահակատունն ու ինվենտարը, հետևել շենքերի տաքացնելուն ու լուսավորությանը, ինչպես նաև կատարել այլ և այլ պարտականություններ, որոնք որոշվում են պարետի կամ պահպանող մասի հրամանատարի կողմից հաստատված հրահանգով։ Զորական մասերի



ներքին պահակների պահակատներում պահապաններ չեն նշանակվում, պահակատունը մաքուր և սարքին պահելու պարտականությունը դրվում է պահակի կազմի վրա։

## 6. ՊԱՀԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ

50. ՊԱՀԱԿԸ գործողության պատրաստվում է (շարվում է).

1) փոխվելիս.

2) Կայազորում, զորամասում (ներքին պահակների համար) կամ պահակի ռայոնում տագնապի դեպքում.

3) օդային ու քիմիական տագնապի ժամանակ.

4) պոստի (պահակի) կամ պահպանության օբյեկտի վրա հարձակման դեպքում.

5) տարերային աղետների (հրդեհ, հեղեղ և այլն) վտանգի ժամանակ.

6) յերբ պահակի աջակցությունն է պահանջվում պահակի մոտերքում հասարակական ապահովության խախտման դեպքում.

7) կալանավորների մեջ անկարգության դեպքում.

8) պահակը ստուգելու իրավունք ունեցող անձանց հրամանով.

51. Պահակապետի «շարվիր» հրամանով պահակի առկա կազմը, հավաքելով զենքն ու հակագազերը շարվում է կամ պահակատան ներսում (50-րդ հոդվածի «1» և «8» կետերում մատնանշված դեպքերում) կամ դրսում պահակատան մուտքի մոտ (նույն հոդվածում մատնանշված մնացած դեպքերում)։

Հետագայում պահակը գործում է նայած պարագային պահակապետի ցուցումով (գլուխ III հոդ. հոդ. 110–129)։

## 7. ՊԱՀԱԿՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

52. Պահակների ստուգումը նպատակ ունի հսկելու պահակում ծառայության ճիշտ կատարման վրա, այն է՝ 1. ժամապահների կողմից ծառայության կատարումը պոստերում. 2. պոստերի սարքին դրությունը. 3. կարգը պահակատանը, նրա կարգին պահումը, կազմի առկայությունը պահակատանը. 4. պահակի կազմի կողմից իր պարտականությունների գիտենալը։

53. ՊԱՀԱԿԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ.

1) այն անձինք, վորոնց յենթարկվում են պահակները.

2) այն զորամասի բոլոր ուղղակի պետերը, վորից կարգված է վերակարգը, սկսած վաշտի հրամանատարից (խմբի պետից) և ավելի վեր ու



նրանց համապատասխանող հրամանատարական-քաղաքական կազմը, իսկ տեղական հրաձգային մասերում, ինչպես և պահակային հաստիքավոր խմբերում նաև զասակի հրամանատարները.

3) պարետի հանձնարարությամբ նրա օգնականներն ու պարետային համհարզները (ադյուտանտները).

4) ԲԳԿԲ Շտաբի Պետը, ԲԳԿԲ գլխավոր վարչության պետը, շրջանների ՀՌԽ անդամները, ճակատի, բանակի, շրջանի, կորպուսի, դիվիզիայի, առանձին բրիգադի և զորական այն մասերի շտաբի պետերը, վորոնցից նշանակված են պահակները.

5) Շրջանների զորքերի հրամանատարների ու ԲԳԿԲ Շտաբի պետի և ԲԳԿԲ Գլխավոր Վարչության պետի կողմից հանձնարարած անձինք ։

54. Ժամապահների պարտականությունների կատարման մեջ անճշտություններ հայտաբերելու դեպքում պահակները ստուգող անձինք տալիս են անհրաժեշտ ցուցումներ.

ա) ուղղակի պետերը, վոր մատնանշված են 28-րդ հոդվածում՝ անմիջորեն ժամապահներին.

բ) բոլոր այլ անձինք, վորոնք իրավունք ունեն միայն ստուգելու պահակները՝ պահակապետին։ Ստուգման ժամանակն ու արդյունքները ստուգողները նշում են պոստային տեղեկագրում։

## Ծ. ՊԱՀԱԿԱՏՈՒՆ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ ԹՈՒՅԼ ՏԱԼԸ, ՎՈՐՈՆՔ ՉԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ՊԱՀԱԿԻ ԿԱԶՄԻՆ

55. ՊԱՀԱԿԱՏՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԱՆՁԻՆՔ, ՎՈՐՈՆՔ ԳԱԼԻՍ ԵՆ

*ա) փոխելու պահակը.*

*բ) ստուգելու պահակը.*

*գ) պահակի պահպանության տակ գտնվող պահեստարանից գումարներ կամ գույք գնելու կամ հանելու համար.*

*դ) վորոնք կարիք ունեն տեսնելու պահակապետին ծառայության գործերով, և*

*ե) իրավունք ունեն տեսակցելու կալանավորների հետ, ինչպես նաև այն կարմիր բանակայինները, վորոնք նրանց համար կերակուր են բերում:*

56. ԱՅՆ ԱՆՁԵՐԻՑ, ՎՈՐՈՆՔ ՊԱՀԱԿԱՏՈՒՆ ԵՆ ՅԵԿԵԼ, ԲԱՑԻ ՆՐԱՆՑԻՑ, ՈՎՔԵՐ ՊԱՀԱԿԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ՅԵՎ ԱՆՁԱՄԲ ԾԱՆՈԹ ԵՆ ՊԱՀԱԿԱՊԵՏԻՆ, ԱՆՄԻՋԱՊԵՍ ՍՏՈՒԳՎՈՒՄ Ե ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԸՍՏ ՎՈՐՈՒՄ.

*ա) պահակը փոխելու համար յեկողից հարցվում է նշանաբանը.*



*բ) պահակը ստուգելու յեկողից՝ նշանաբանն ու անձնական վկայագիրը, իսկ այն անձերից ովքեր գալիս են պահակը ստուգելու կայազորի պետի, պարետի (մեծ կայազորում) հանձնարարությամբ. բացի դրանից, նաև հատուկ վկայական ստուգելու իրավունքի մասին՝ կայազորի կամ պարետի ստորագրությամբ ու կնիքով:*

57. *Այս բոլոր դեպքերում, մինչև թույլտվության իրավունքի պարզելը պահակի կազմը յեկողի հետ պահակային ծառայության եյության մասին վոչ մի բացատրության մեջ չի մտնում:*

## Գ. ԴԵՊԻ ՊԱՀԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԸ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՈՒ ԳՈՒՅՔ ԴՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

58. *Այն անձինք, վորոնք պահակն են յեկել թե պահակատան ներսում և թե դրսում ժամապահների կողմից պահպանվող պահեստարաններում դրամական գումարներ կամ գույք դնելու կամ հանելու համար, պետք է ներկայացնեն պահակապետին.*

1) *դրավոր պահանջ սահմանված ձևով (վորի օրինակը պետք է լինի պահակատանը) այն վարչության (զորամասի) պետի կամ այլ անձնավոր-*

րության ստորագրությամբ ու կնիքով, որի իրավասության տակ գտնվում է պահեստարանը, հիշատակելով պահանջի մեջ ամսաթիվը, ժամը և ում (պաշտոնը, անունը, հայրանունը և ազգանունը) իրավունք է տրվում թույլտուքի (գրավոր պահանջի օրինակը հավելված № 3).

2) Պարետի կողմից (իսկ որտեղ այդպիսին չկա՝ կայազորի պետի կողմից իսկ ներքին պահակների համար՝ զորամասի հրամանատարի կողմից) վավերացված՝ հիմնարկի (զորամասի) այն կնիքի դրոշմվածքը, որով կնքված է պահեստարանը և ինքը կնիքը կամ հիմնարկության կապարե կնիքի (պլոմբի) մամլակը.

3) Իր անձնական վկայականը:

Ծանոթություն. *Այնպիսի պահեստարանների թույլտուքի ժամանակ, որոնք բացվում են ծառայության ժամերին յերկար ժամանակով, այդ պահեստարանները գալու թույլատվության պայմաններն ու կարգը կարող են պարզեցված լինել, մանրամասնորեն մատնանշելով այդ մասին պոստացուցակներում:*

59. Յեթե պահեստարանը բացվում է միայն թույլտուքի ժամանակ, ժամապահը պոստից չի հեռացվում, իսկ պահեստարանի բացումն ու փակումը և ժամապահի կողմից պահեստարանի ըն-



դունումը կատարվում է փոխադրի ներկայությամբ:

Իսկ յերբ բացվող պահեստարանը (համաձայն պոստացուցակի) պետք է բաց մնա յերկարատև ժամանակով, ժամապահը կամ մնում է պոստում կատարելու համար այն պարտականությունները, որ մատնանշված են այդ դեպքի առթիվ պոստերի ցուցակում, կամ հեռացվում է:

60. Թույլտուքն ավարտելուց և պահեստարանը փակելուց ու կնքելուց և փոխադրի ու ժամապահի կողմից պոստի լիակատար սարքինությունը ստուգելուց հետո, թույլատրված անձը ստորագրում է պահանջի ու պոստային տեղեկագրի մեջ. թե այսինչ թվին, ամսին ու ամսաթվին, այս-ինչ ժամին բացել է պահեստարանը (պահեստը, դրամարկղը և այլն), որը պատկանում է այս-ինչ հիմնարկին, ստորագրություն, թույլտուքն ավարտել է այս-ինչ ժամանակ (ճիշտ ժամանակը): Այդ մակագրությամբ հիմնարկի իսկական պահանջը, պահակապետի վավերացումով պահակը փոխվելուց հետո ներկայացվում է զորամասի շտաբին, կցելով նրան պոստային տեղեկագիրը:

# 10. ԴԵՏՔԵՐ ՈՒ ԳԱՂՈՆՔՆԵՐ

61. Դետքերն ուղարկվում են պահակապետի կողմից վորոշ ժամկետով, նպատակ ունենալով ուժեղացնելու պահակի պահպանությունը,

1) յերբ հնարավոր է պահպանվող օբյեկտի կամ պահակի վրա վերերկրյա կամ օդային հարձակում (դեսանտ).

2) պահպանելու համար կարգն ու դույքը պահպանվող օբյեկտի տերիտորիայում, պահակատան մոտերքում օդային հարձակման կամ հրդեհի ժամանակ և

3) այն բոլոր դեպքերում, յերբ անհրաժեշտ է զննել պոստերին հարակից տեղանքը թե պահպանության օբյեկտի (պահեստի, աերոդրոմի և այլն) տերիտորիայի դրսի և թե ներսի կողմից գիշերով, մառախուղին.

4) պարզելու համար պարագան պահակատան կամ պոստի մոտերքում տեղի ունեցած վորևէ պատահարի դեպքում:

62. Դետքերը կարող են բաղկացած լինել այն մարդկանցից, վորոնք մտնում են պահակի կազմի մեջ (այդ դեպքում դետքն ուղարկվում է մի ժամից վոչ ավելի ժամկետով պոստից փոխված հերթափոխի պահակապանների թվից) կամ այն դիտակալների թվից, վորոնք հատկապես կարգվում են քաղաքի պարետի, կամ պահպանող զորամասի հրամատարի (մշտական պահպանության ժամանակ) կարգադրությամբ:



Դիտակալների վերակարգը յենթարկվում է պահակապետին:

63. Դետքի կազմի մեջ մտնում են. դետքի պետը (պահակապետի օգնականը կամ փոխադիրը, կամ զորամասից կարգված հատուկ ջոկհրամատար կամ ամենից զարգացած հին ծառայության կարմիր բանակային) և առնվազն յերկու դիտակալ:

Բացի դրանից, տեղանքը լուսաբանելու և պահպանվող օբյեկտի տերիտորիան սողոսկած կամ սողոսկել փորձող չարագործներին բռնելու համար կարող են ուղարկվել դետքեր խուզարկու շներով վորոշ ժամանակով, վորպես կանոն՝ գիշերով—քաղաքի պարետի կարգադրությամբ, իսկ մշտական պահպանության ժամանակ՝ պահպանող զորամասի հրամատարի կարգադրությամբ:

Ծանոթություն.— Դետքի մոտեցումը պահակաչան բլոկ-պոստին դրսի կողմից 150 մետրից ավելի մոտ չի թույլատրվում: Անհրաժեշտության դեպքում այդ շերտը հանձ-

նարարվում է շրջագայելու շնապանին շան հետ: Շնապանը շրջագայության ժամանակ յերկար կապից շանը բաց չի թողնում:

64. Դետքերի առաքման բոլոր դեպքերում նրանց վորոշ խնդիր է առաջադրվում, մասնանշվում է ընթացուղին (դրսի պոստերի գծից 500 մետրից վոչ ավելի), մեկնման ժամանակը, զեկուցման կարգը կամ նշանաբառության յեղանակները և ծառայության ավարտման ժամանակը: Դետքեր ուղարկելու մասին վաղօրոք հաղորդվում է պոստերին:

65. ԴԵՏՔԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

1) թույլ չտալ կողմնակի անձերից վոչ վոքի այն տերիտորիայում, վոր հանձնված է նրա դիտողությանը: Կասկածելի անձանց, կամ մինչև պոստերի գիծը կամ դեպի պահպանվող օբյեկտը սողոսկել փորձողներին բռնել ու հանձնել պահակապետի կամ նրա օգնականի տրամադրությանը: Բռնվող անձի թշնամական այնպիսի գործողությունների դեպքերում, վոր մասնանշված են 105-րդ հոդվածում, գործադրել զենք.

2) փոխարինել հիվանդացած ժամապահին (վորտեղ դետքի կազմի մեջ մտնում է պահակապետի օգնականը), կարգել ժամանակավորապես նոր ժամապահ դիտակալների թվից, իսկ հիվան-



դացած ժամապահին ուղարկել անմիջապես պահակատուն.

3) պոստի դեմ գործած հարձակման ժամանակ օգնել ժամապահին յետ մղելու հարձակում գործողներին.

4) պահպանության օբյեկտի վրա (պահեստներ, աերոդրոմներ և այլն) օդային հարձակման և դրա հետ տեղի ունեցած աղետների ժամանակ (հրդեհ, թունավորում և այլն) պահպանել սահմանված կարգը, կենսագործելով պահակապետի ցուցումները.

5) պահակատան կամ պոստի մոտերքում վորևե պատահար յերևան հանելու, ինչպես նաև հափշտակության, սպանության և այլ բռնի գործողությունների հայտաբերման դեպքում միջոցներ ձեռք առնել դադարեցնելու այդպիսին, կանչել միլիցիային և նրան հանձնել բռնած վոճրագործներին, շարունակելով կատարել պահակապետի առաջադրած խնդիրը:

Խնդիրը կատարելուց հետո դետքը վերադառնում է պահակատուն: Դետքի պետը զեկուցում է պահակապետին բոլոր նկատածների մասին:

66. Հատուկ կարևոր ուղղություններում, վորտեղ կան այնպիսի ծածկարաններ, վորոնք կարող են մատույցներ ծառայել դեպի պոստերը

կամ դեպի պահպանության օբյեկտը, գրվում են գաղտնքներ (2–3 հոգի) վորոշ ժամանակով, վորպես կանոն գիշերը, խնդիր առաջադրելով դիտել այդ ուղղություններով և ժամանակին նախազգուշացնել վտանգի մասին պոստերին ու պահակապետին:

Ծանոթություն.— Երբ կան պահապան շներ, ավելի մեծ աչալրջության համար գաղտնքը կարող է ուղարկվել շնավարը շան հետ միասին: Բացի դրանից, զեկուցագրերն ավելի արագ հասցնելու համար գաղտնքի մեջ կարող է մտցնվել նաև կապի շուն:

67. Գաղտնքները դնում է պահակապետը այն մարտիկների թվից, վորոնք կարգված են այդ նպատակի համար պահապան զորամասի պետի կամ քաղաքի պարետի կողմից: Պահապան շներ տալը գաղտնքներին, այդպիսիները գաղտնքում մնալու ժամանակը, և շրջագայությունը բլոկպոստի առջևի շերտում նշվում է պոստային տեղեկագրում:

## Գ. ՊՈՍՏ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

68. ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՀԱՆՁՆԱՐԱՐՎԱԾ Է ԺԱՄԱՊԱՀԻՆ՝ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՇՏՊԱ-



ՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ և վայրը կամ տեղամասը, վորտեղ նա կատարում է իր պարտականությունները, հանդիսանում է պոստ:

69. Պոստերը, նայած կարևորության աստիճանին և այնտեղ ծառայություն կրելու ժամանակին, բաժանվում են մշտական պոստերի, վորոնք պահպանվում են օր ու գիշեր, և ժամանակավոր պոստերի, վորոնք պահպանվում են օրվա միայն մի մասի ընթացքում. և՛ առաջինները և՛ յերկրորդները կարող են լինել յեռափոխ և յերկփոխ:

Պահպանության կարգը, պոստերի դասավորությունն ու սահմանները վորոշվում են պահակային վերակարգի ցուցակով ու պոստացուցակով (հավելված № 1-ին և 2-րդ):

70. Պոստերի պահպանության համար պահակը կարգում է ժամապահներ (զինված մարտիկներ): Ռազմական գործողությունների թատերաբեմում և սահմանամերձ շերտում, ինչպես նաև հրասպաշարների ու պայթուցիկ նյութերի պահեստների պահպանության ժամանակ և այլ անհրաժեշտ դեպքերում պոստի պահպանությունն ու պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով ժամապահին օգնելու համար կարող է նշանակվել նաև ժամապահի օգնական, վորը ծառայությունը կրում է ժամապահի համեմատ:

71. Պահակաշներն օգտագործվում են պահպանելու համար դրսի պոստերը յերկու յեղանակով.

1) Պոստերի առջևում պահեստի, աերոդրոմի և այլի տերիտորիայի ամբողջ շրջապարսպի յերկայնքով.

2) առջևում ամենից սպառնալի կետերում (սանդղաձև) և պոստերի միջև:

## 2. ԺԱՄԱՊԱՀՆԵՐԻ ՓՈԽԵԼԸ

72. Ժամապահների փոխելը կատարվում է. յեռափոխ պոստերում 2 ժամը մեկ, յերկփոխ պոստերում՝ ամառը, ցերեկով—3-5 ժամը մեկ, իսկ գիշերը 2-4 ժամը մեկ, ձմեռը՝ յեռափոխ պոստերի համար սահմանած կանոններով:

15 աստիճան (Ցելսիուսով) և ավելի սառնամանիքի դեպքում, իսկ քամու ժամանակ ավելի պակաս սառնամանիքին բոլոր դրսի պոստերում, ինչպես նաև չտաքացվող շենքերի ներսի պոստերում ժամապահներին փոխել յուրաքանչյուր ժամը մի անգամ:

Սավերում 30 աստիճան և ավելի շոգին դրսի պոստերում ժամապահներին փոխել նույնպես ժամը մի անգամ:

Ծանոթություն.— Ժամապահներին ժամը մի անգամ և կրկին յերկու ժամը մի անգամ փոխելուն անցնելը յուրաքանչյուր առանձին դեպքում վորոշում է պահակապետը, յելնելով կլիմայական պայմաններից ու պոստերի դասավորության բնույթից: Ժամապահների կարգման ժամանակի բոլոր փոփոխությունները նշվում են պոստային տեղեկագրում:



73. Ժամապահներին փոխելու համար պահակապետի հրամանով ու հսկողությամբ փոխադիրը շարում է պահակապանների հերթական փոխին հիշեցնում է նրանց առաջիկա խնդիրը և նրբանցից յուրաքանչյուրի °առանձին պարտականությունները, հրամայում է լցնել զենքը, ստուգում է զենքի սարքինությունը, փամփուշտների առկայությունը փամփշտամաններում և տանում է հերթափոխին դեպի պոստերը:

Նոր պահակի առաջին հերթափոխի հետ գնում են պոստերը հին պահակի փոխադիրները՝ փոխելու համար հին պահակի ժամապահներին, վորոնց փոխելուց հետո նրանք տանում են պահակատուն:

74. Փոխվող ժամապահից 3 քայլի վրա փոխադիրը կանգնեցնում է պահակապաններին և հրամայում է հերթականին անցնել փոխելուն:

75. Պոստի հանձնումն այն է, որ ժամապահը հաղորդում է պոստի №-ը կարգվող պահակապանին, գործնականապես մատնանշում է, թե ինչ է գտնվում հանձնման տակ (դռներ, լուսամուտներ, փականներ, կնիքներ և այլն)։ Հաղորդում է տվյալ պոստի պահպանության ու պաշտպանության առանձնահատկության մասին։ Դրսի պոստերում, բացի դրանից, մատնանշվում է դիտողության սեկտորը և պահակաշան տեղը, յեթե այդպիսին դրված է։

Պոստի հանձնման ժամանակ որևէ թերության հայտաբերման դեպքում (կնիքների, փականների կամ քուղերի վնասվածք, կնիքները դրոշմվածքի հետ չնմանելը, ջարդվածք և այլն), պոստի հանձնումը կասեցվում է մինչև պահակապետի գալն ու կարգադրությունը, որին փոխադիրը պոստն է կանչում անմիջապես։

Հագած պոստային հագուստը ժամապահը հանձնում է փոխող պահակապանին պոստը հանձնելուց հետո։ Ընդ որում նրանք միմյանց ոգնում են առանց իրար հանձնելու զենքը։

76. Ժամապահի պահակապանի դրության, իսկ պահակապանի ժամապահի դրության անցնելը վորոշվում է այն մոմենտով, յերբ փոխադիրին զեկուցվում է պոստն ընդունելու մասին։



77. Փոխելով առաջին պոստը, փոխադիրը տանում է պահակապաններին դեպի մյուս պոստը․ ըստ որում յեթե մի պոստից դեպի մյուսն անցնելիս ճանապարհին հերթափոխը կարող է անցնել պահակատան մոտից, փոխադիրը պահակատուն է ուղարկում փոխված պաչակայիններին, որոնք ներկայանում են պահակապետին կամ նրա ոգնականին և նրանց հրամանով լցահանում են զենքը։

78. Ոգնականների հետ ժամապահները փոխվում են նույն կարգով, ինչ սահմանված է միայնակ ժամապահների համար, ըստ որում առաջ փոխվում է ժամապահի ոգնականը և ապա՝ ժամապահը։

## Դ. ՊԱՀԱԿԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. ՊԱՀԱԿԱՊԵՏ

#### Ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

79. Պահակապետ նշանակվում է նայած պահակի կազմի թվական քանակին ու պահպանության ոբյեկտի նշանակության հրամանատարական կազմի անձ՝ սկսած ջոկի հրամանատարից և ավելի վեր։

80․ Այն մոմենտից, յերբ պահակը մեկնում է բնակատեղից, պահակի կազմն անցնում է պահակապետի լիակատար ստորադասության տակ:

81․ Պահակապետը յենթարկվում է կայազորի պահակների որապահին, նրա ոգնականին, պարետին (վորտեղ կա) և կայազորի պետին, իսկ զորամասի ներսի պահակների պետերը՝ զորամասի որապահին ու զորամասի հրամանատարին:

*Այն բոլոր հրամանները, վոր վերոհիշյալ անձերի անունից հաղորդվում են պահակապետին այլ անձերի միջոցով, պետք է վավերացվեն նշանաբանի հաղորդումով:*

82․ ՊԱՀԱԿԱՊԵՏԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է․

1) *լավ գիտենալ պահակի բոլոր անձանց պարտականությունները, իր պահակի ու պոստերի վերաբերյալ հատուկ հրահանգները․*

2) *Նա պետք է գիտենա պահպանվող ոբյեկտի պաշտպանության պլանի քաղվածքը՝ պահակի գործողությունների վերաբերյալ (պահեստների, աերոդրոմների և այլոց պահպանության ժամանակ)․*

3) *Նա պետք է անընդհատ հսկի պահակի ամբողջ կազմի, վորոնց թվում նաև պահակաշների շնապանների պարտականությունների կանոնավոր ու ճիշտ կատարման վրա, պարբերաբար ստուգի*



*ժամապահների ծառայության կատարման ճշտությունը, թե՛ անձամբ և թե՛ իր ոգնականի ու փոխադիրների միջոցով․*

4) *Նա պետք է հսկի, վոր ժամանակին պոստերն ուղարկվեն հերթափոխները և ստուգի, թե գիտեն արդյոք իրենց պարտականությունները հերթական փոխորդի պահակապանները:*

5) *Նա պետք է հետևի տեխնիկական կապի ու նշանարարության միջոցների, հրդեհաշեջ ինվենտարի և պահակում յեղած ամբողջ կահավորանքի սարքին դրությանն ու պահպանությանը, ժամանակին զեկուցելով անսարքությունների մասին կայազորի պահակների (զորամասի) որապահին․*

6․ *Նա պետք է հետևի զենքի սարքին դրությանը, մարտամթերքների պաշարի պահպանմանը և պահակատանը սահմանված կարգի պահպանմանը․*

7) հրապաշարների ու պայթուցիկ նյութերի պահեստարանների, քիմիական պահեստների, անգարների, վառելանյութով պահեստների պահպանության ժամանակ պետք է հետևի, վորպեսզի պահակի այն բոլոր մարդիկ, վորոնք մեկնում են պոստերը, դետքերը, գաղոնքը, թողնեն պահակատանը հրձիգ պատկանելիքները, ինչպես նաև

պահանջի պահեստարանները թույլտուքով յեկածներից, վորպեսզի նրանք լինեն սահմանված վոտնամանով, առանց զենքի, իրենց պատկանելիքների, իսկ քիմիական պահեստներում լինեն հակագազերով.

8) Նա պետք է ընդունի և հարկ յեղած դեպքում կարճատև հարցաքննությունից ու խուզարկությունից հետո կայազորի պահակների (զորամասերի) որապահի մոտ ուղարկի դեպքերի բռնած կասկածելի անձանց, կամ այն անձանց, վորոնք փորձել են սողոսկելու դեպի պոստերը կամ դեպի պահպանվող օբյեկտի տերիտորիան.

9) Նա պետք է հրդեհի դեպքում արագ միջոցներ ձեռք առնի հանգցնելու այն և փրկելու գույքը, միաժամանակ հաղորդելով մոտակա հրդեհաշեջ խմբին և հերթապահ զորական մասին և զեկուցի պահակների (զորամասի) որապահին, մատնանշելով անհրաժեշտ ոգնության չափը.

10) Նա պետք է զորամասը կամ մոտակա բուժիչ հիմնարկն ուղարկի պահակի կազմից հիվանդացածներին, պահանջելով զորամասի որապահից հիվանդացածին փոխարինող.

11) Հանկարծակի հիվանդության դեպքում պետք է իր պարտականությունների կատարումը



հանձնի օգնականին կամ փոխադիրներից մեկին նշանաբանի հետ միասին, և չթողնելով պահկատունը (յեթե այդ հնարավոր է ըստ հիվանդության բնույթի), զեկուցի պահակների (զորամասի) որապահին, հետագայում վարվի վերջինիս ցուցումների համաձայն.

12) Նա պետք է զեկուցի կայազորի պահակների (զորամասի) որապահին պահակում և պոստերում տեղի ունեցած բոլոր պատահարների և ձեռք առած միջոցների մասին:

83. ՊԱՀԱԿԱՊԵՏԸ ԿԱՐՈՂ Է ԶԵՆՔ ԳՈՐԾԱԴՐԵԼ ՅԵՎ ՀՐԱՄԱՅԵԼ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԱՅԴՊԻՍԻՆ, ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԻՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ.

1) յերբ հարձակվում են պոստի, պահակի և պահպանվող օբյեկտի վրա.

2) յետ մղելու համար հակառակորդի ցածբացող սավառնակներին.

3) կալանավորների բացահայտ վրդովման, նրանց կողմից պահակին ցույց տված դիմադրության կամ փախուստի փորձի դեպքում. տվյալ դեպքում, յեթե ժամանակն ու պարագան թույլ են տալիս զենքի գործադրությանը պետք է նախոր-

դեմ այն կալանավորների նախազգուշացումը, վորոնց դեմ զենք ե գործադրվելու:

84. ՊԱՀԱԿԱՊԵՏԻՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե.

*ա) բացակայել պահականոցից, բացի այն դեպքերից, վորոնք կապված են պոստերի ստուգման, հիվանդության և պահակի տերիտորիայում տեղի ունեցող պատահարի հետ (հարձակում, հրդեհ և այլն).*

*բ) արձակել պահակի կազմից մեկն ու մեկին, ավելացնել պոստերը, կամ տեղափոխել ժամապահներին, բացի այն դեպքերից, վոր նախատեսված են սույն կանոնադրքով.*

*գ) թույլ տալ պահականոցը կամ պահպանվող ոբյեկտի տերիտորիան մտնելու այն անձանց, վորոնք դրա իրավունքը չունեն.*

*դ) թույլ տալ մասնավոր խոսակցությունները հեռախոսով:*

85. *Պահակի ստուգման համար պահականոց յեկող անձերին պահակապետը զեկուցում ե պահակի դրության մասին (զեկուցման ձևը կամավոր ե):*

*Յեթե ստուգողը ցանկություն ե հայտնում ստուգելու, թե ինչպես ե կատարվում ծառայությունը պոստերում, նրան ուղեկցում ե ինքը պահակապետը կամ նրա ոգնականը:*



86. *Յերբ ժամապահներին փոխելու ժամանակ պոստում հայտաբերվում ե թերություն, պահակապետը փոխադրի կամ ժամապահի կանչով, թողնելով իր տեղն ոգնականին, գալիս ե պոստը, մանրամասնորեն պարզում ե հայտաբերած թերությունները, նշում ե նրանց մասին պոստային տեղեկագրում, իսկ ժամապահներին հրամայում ե փոխվել: Տեղի ունեցածի մասին պահակապետն անմիջապես զեկուցում ե պահակների (զորամասի) որապահին: Պոստում թերությունների հետագա չտկման կամ վերացման մասին դարձյալ նշում ե պոստային տեղեկագրում, իսկ մինչև թերության վերացումն ուժեղացնում ե այդպիսի պոստի հսկողությունն ու ստուգումը:*

## Բ) ՊԱՀԱԿԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՊԻ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԸ ԹՈՒՅԼՏՈՒՔԻ ԺԱՄԱՆԱԿ

87. *Նախքան վորևե մեկին պահպանվող պահեստարանը թույլ տալը, պահակապետը.*

1) *համեմատում ե առաջդրված պահանջի ձևը այն որինակի հետ, վորը պահվում ե պահակում (հոդ. 58).*

2) *ստուգում ե յեկած անձնավորության վկայականը, համեմատում ե պարետի (զորամասի հրամատարի) վավերացրած կնիքի դրոշմը-*

վածքն ու կնիքը կամ հիմնարկի կապարի կնիքի մամլակը այն դրոշմվածքի հետ, վոր կա պահակում․

3) այս բոլորի ճշտության դեպքում հրամայում է փոխադրին կատարել թույլտուքը, պահանջագիրը թողնում է իր մոտ և հետագայում կատարում է 58–60 հոդվածներում մատնանշվածը․

4) պահեստարանի յուրաքանչյուր թույլտուքի մասին պահակապետը նշում է պոստային տեղեկագրում, ճիշտ նշանակելով այն ժամանակը, վորի ընթացքում պահեստարանը մնացել է բաց, իսկ յեթե ժամապահները հեռացված են յեղել, ապա և ժամապահների հեռացման մասին։

ՊԱՀԱԿԱՊԵՏԸ ԹՈՒՅԼ ՉԻ ՏԱԼԻՍ ՑԵԿԱԾԻՆ․

ա) յեթե պահանջագրում մատնանշված անձնավորությունը գալիս է վոչ նշանակված որն ու ժամին․

բ) յերբ գալիս է մի այլ անձնավորություն, պահանջագրում մատնանշված անձի փոխարեն․

գ) յերբ նմանություն չկա, կամ վորևե անճշտություն կա պահանջագրի ձևի մեջ, կնիքների դրոշմվածքների կամ կնիքի, կապարի կնիքի մամլակի կամ անձնագրի մեջ։



Չթույլատրման և նրա պատճառների մասին պահակապետը մակագրություն է անում պահանջագրի վրա, թե այս–ինչ պատճառով թույլտվությունը չի յեղել, պահանջագիրը կցում է պոստային տեղեկագրին։ Վերոհիշյալ կանոնների չարամիտ խախտման հայտաբերման դեպքում ձերբակալում է յեկածին և անմիջապես զեկուցում է այդ մասին կայազորի պահակի (զորամասի) որապահին։

## Գ) ՊԱՀԱԿԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀԱՆՈՑՈՒՄ

88․ ՊԱՀԱԿԱՊԵՏԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է․

1) հետևել այն կարգի ճիշտ կատարմանը, վոր սահմանված է կալանավորներին պահելու համար․ միջոցներ ձեռք առնել կալանավորների փախուստը և փախուստի յուրաքանչյուր փորձ կանխելու համար․

2) պահել իր մոտ պահանոցում գտնվող կալանավորների շենքի բանալիները։ Ընդունել կալանավորներին կամ ուղարկել նրանց ըստ պատկանելույն միայն քաղաքի պարետի (զորամասերում՝ զորամասի որապահի) գրավոր հրամանով, բացառությամբ այն դեպքերի, յերբ կալանավորներին բաց է թողնում բնական կարիքները հոգալու

կամ գրոտանքի համար։ Կալանավորների ընդունելության և առաքման ժամանակ ստուգել նրանց առկայությունը և փաստաթղթերի ճշտությունը, այն փաստաթղթերի, վորոնցով նրանք ուղարկվում են, սեփական ձեռքով նշելով կալանավորների գրքում ավելացումն ու պակասելը.

3) անմիջապես զեկուցել կայազորի պահակների (զորամասի) որապահին կամ պարետին կալանավորների շենքում նկատված թերությունների մասին, իսկ կալանավորների փախուստի հայտաբերման դեպքում միաժամանակ հաղորդել նաև միլիցիայի մոտակա բաժանմունքին.

4) Թույլ տալ կալանավորների մոտ ռազմադատախազական հսկողության անձանց, յերբ վերջիններս ներկայացնում են պաշտոնական վկայագրեր.

5) Թույլ տալ կայազորային պահանոցում գտնվող կալանավորների մոտ այցելուներին, յերբ ներկայացնում են պարետի կամ կայազորի պետի գրավոր թույլտվությունը.

6) ընդունել և հանձնել վերադասության կարգով կալանավորներից ստացվող դիմումները.

7) հետևել, վոր ժամանակին հասցնեն կալանավորների կերակուրը։



89. Պահակը փոխելիս պահակապետը ընդունում է կալանավորներին անվանակոչով կալանավորների գրքով, զննում է թե կալանավորներին և թե նրանց զբաղեցրած շենքը։

Ընդունելությունն ու զննությունը վերջացնելուց հետո հին ու նոր պահակապետները անձամբ նշում են կալանավորների գրքում.—առաջինը՝ հանձնած կալանավորների, իսկ յերկրորդը՝ ընդունած կալանավորների թվի ու նրանց հանձնած սեփական իրերի ու դրամների մասին։

90. Շենքում այնպիսի թերությունների հայտաբերման դեպքում, վոր կարող են նպաստել կալանավորների փախուստին, պահակապետը պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել փախուստը կանխելու համար, ծայրահեղ դեպքում կալանավորների շենքի դրսում ժամանակավորապես լրացուցիչ պոստեր կարգելով։

91. Կալանավորների առաքման ժամանակ պահակապետը անհրաժեշտության դեպքում ուժեղացնում և զգուշացնում է այդ մասին այն անձանց, վորոնք ուղարկված են կալանավորների յետեվից։

92. Յերբ կալանավորները խիստ աղմկում են, կամ ընդհանրապես վորեվե անկարգություն են անում, պահակապետը միջոցներ է ձեռք առ-

նում կարգը վերականգնելու համար։ Փախուստի փորձի դեպքում, կամ երբ սպառնալիք է ստեղծվում պահակի իրեն համար, համապատասխան նախազգուշացումից հետո գործադրվում է զենք։

93. Պահակը փոխելուց հետո պահակապետը պոստային տեղեկագրի հետ միասին ներկայացնում է.

ա) փաստաթղթեր կալանավորների ազատման կամ վորեվե տեղ առաքման մասին, կալանավորներին ընդունած անձնավորության ստորագրության հետ միասին.

բ) անցաթղթերը, վորոնցով այցելուները թույլատրված են լեղել կալանավորների մոտ և

գ) արձանագրությունները պահակատանը, պոստերում ու կալանավորների շենքում լեղած դեպքերի մասին։

94. Սույն կանոնադրքով վորոշվում են պահակապետերի ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները։ Իսկ պահակապետերի հատուկ պարտականություններն այլ դեպքերում (քաղաքական ու ռազմական վարչության ուղղիչ հիմնարկներում, գործարանների, Փաբրիկների, պոլիգոնների պահպանության ժամանակ և այլն) վորոշվում են յուրաքանչյուր առանձին դեպքում



պահակապետի հատուկ հրահանգով, վոր մշակում է պարետը (կայազորի սահմաններում գտնվող պահպանության օբյեկտների համար) կամ պահապան զորամասի հրամանատարը (կայազորից դուրս գտնվող օբյեկտների համար) և հաստատում է կայազորի պետը (պահպանվող օբյեկտի պետը)։

## 2. ՊԱՀԱԿԱՊԵՏԻ ՈԳՆԱԿԱՆԸ

95. ՊԱՀԱԿԱՊԵՏԻ ՈԳՆԱԿԱՆՆ ԱՆՄԻՋՈՐԵՆ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՊԱՀԱԿԱՊԵՏԻՆ ԵՎ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՆՐԱ ՏԵՂԱԿԱԼԸ

96. ՊԱՀԱԿԱՊԵՏԻ ՈԳՆԱԿԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

1) ստուգել պահակային ծառայության կրելը բոլոր փոխադիրների և պահակի այլ կազմի կողմից, ստուգել պոստերն ամենապակասն օրական 4 անգամ, ստուգել հերթափոխի ուղարկման ժամանակ փոխադիրների ու պահակայանների զենքի ու հանդերձանքի սարքինությունը։

2) Հետևել պահակատան կարգ ու կանոնին և այնտեղ զենքի, տեխնիկական գույքի և ամբողջ ինվենտարի սարքին պահպանմանը.

3) Կատարել այլ պարտականություններ պահակապետի ցուցումով։

## 3. ՓՈԽԱԴԻՐԸ (ՊԱՀԱԿԻ ԶՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ)

97. ՓՈԽԱԴԻՐ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ Է ԶՈԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԿԱՄ ԲԱՐՁՐ ԺԱՄԿԵՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ, ՆԱ ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՊԱՀԱԿԱՊԵՏԻՆ ՈՒ ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԻՆ ՅԵՎ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՆՐԱՆՑ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ, ԻՍԿ ՅԵՐԿՈՒՍԻ ԿՈՐՍՏՅԱՆ ԿԱՄ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԿԱՅԱԶՈՐԻ ՊԱՀԱԿԻ (ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱԿՆԵՐՈՒՄ, ԶՈՐԱՄԱՍԻ ՈՐԱՊԱՀԻ) ՀՐԱՄԱՆՆԵՐԸ:

98. *Փոխադիրը պարտավոր է լավ իմանալ իր պահպանության ու պաշտպանության սեկտորի մեջ մտնող պոստերի դասավորությունը, ինչպես նաև ծառայություն կրելու բնույթը (դիտողության, գնդակոծի, քողարկման պայմանները) և ժամապահների հատուկ պարտականությունները յուրաքանչյուր պոստում:*

99. ԺԱՄԱՊԱՀՆԵՐԻՆ ՊՈՍՏԵՐԻ ՎՐԱ ԿԱՐԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՓՈԽԱԴԻՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

1) *Հավաստիանալ ժամապահի կողմից ընդունվող պոստի սարքինության մեջ (պահեստարաններ, փականներ, կնիքներ, քուղեր, վորոնց*



*վրա դրված են կնիքները, լուսամուտներ ու դռներ):*

2) *Համեմատել կնիքները դրոշմվածքների հետ.*

3) *Հսկել, վորպեսզի հին ժամապահը ճիշտ տա հանձնումը, իսկ նորը՝ յուրացնի իր պարտականությունները.*

4) *Ստուգել նշանարարության, հրդեհաշեջ սարքավորման ու պոստային հագուստեղենի սարքինությունը.*

5) *Մատնանշել ժամապահին, թե ինչի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել դիտողության ժամանակ, ինչպես քողարկվել և ինչ անել հարձակման ժամանակ.*

6) *Մատնանշել ժամապահին հակաքիմիական պաշտպանության անձնական միջոցառումների մասին քիմիական հարձակման ժամանակ և հրդեհի միջոցին գործողությունների ժամանակ:*

100. *Պահակապետի հրամանով փոխադիրը ստուգում է ժամապահների աչալրջությունը և նրանց ծառայության կատարումը:*

101. *Թուլտուքի ժամանակ փակ պահեստարանները մտնելն այն անձանց կողմից, վորոնք թույլտուքի իրավունք ունեն պոստացուցակի համաձայն և պահակապետի հրամանով, փոխադիրը*

*ստուգում է պահեստարանի սարքինությունը և համեմատում է պահեստարանների վրա դրած կընիքը դրոշմվածքի հետ:*

*Յեթե պահեստարանը բանալուց հետո վորոշ ժամանակով պետք է թողնել բաց (աշխատանքի համար), այն ժամանակ փոխադիրը պահակապետի կարգադրությամբ և պոստացուցակի ցուցումների համաձայն կա՛մ թողնում է ժամապահին պոստում, կա՛մ հեռացնում է նրան պահեստարանում տեղի ունեցող աշխատանքի ընթացքում:*

*Պահեստարանը փակելուց հետո պոստն ընդունելու համար փոխադիրը պետք է պոստը դակնիքի համապատասխան դրոշմվածքով, համեմատելու համար այն նոր դրած կնիքի հետ, համեմատությունը կատարում է ժամանապահի և պահպանության օբյեկտի այն ներկայացուցչի ներկայությամբ, վորը պահպանության է հանձնում պահեստարանը:*

102. ՀՐԱՊԱՇԱՐԻ ՈՒ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՈՒՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԽՈՓԱԴԻՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է, ՎՈՐՊԵՍԶԻ ՆԵՐՍ ՄՏՆՈՂՆԵՐԸ ԼԻՆԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱԳՈՒՍՏՈՎ, ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ, ԼՈՒՑԿՈՒ և ՀՐՁԻԳ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ՝ ԿԱՏԱՐԵՆ



ԱՅԴ ԱՌԹԻՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՎՈՐ ՄԱՏՆԱՆՇՎԱԾ ԵՆ ՊՈՍՏԱՑՈՒՑԱԿՈՒՄ:

Ծանոթություն. *Հարձակման կամ հըրդեհի դեպքում գործում է սույն կանոնադրքի III գլխի համաձայն:*

## 4. ԺԱՄԱՊԱՀ

103. ԺԱՄԱՊԱՀԸ ԶԻՆՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ Է, ՎՈՐԸ ՊՈՍՏԻ ՎՐԱ ՅԵ ԿԱՐԳՎԱԾ ՊՈՍՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇ ԽՆԴՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ:

ՆԱ ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՊԱՀԱԿԱՊԵՏԻՆ, ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԻՆ ՅԵՎ ԻՐ ՓՈԽԱԴՐԻՆ. ՄԻԱՅՆ ՍԸՐԱՆՑ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ Է ԺԱՄԱՊԱՀԸ ԿԱՆԳՆՈՒՄ ՊՈՍՏԻ ՎՐԱ, ՓՈԽՎՈՒՄ ԿԱՄ ԹՈՂՆՈՒՄ ՊՈՍՏԸ:

*Այս անձերի կորստյան կամ իրենց պարտականությունները կատարելու ֆիզիկական անհընարինության դեպքում ժամապահի կարգումը, փոխելը և պոստից հեռացնելը կարող է կատարել միայն անձամբ զորամասի որապահը (ներքին պահակների համար), կամ կայազորի պահակների որապահը (կայազորային պահակների համար):*

104. ԿԱՐԳՎԵԼՈՎ ՊՈՍՏԻ ՎՐԱ, ԺԱՄԱՊԱՀԸ ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍՏՈՒԳԻ ՅԵՎ

ՀԱՄՈԶՎԻ ԱՅՆ ԱՄԵՆԻ ՍԱՐՔԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԻՆՉ ՀԱՆՁՆՎԱԾ Է ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄՈԶՎԻ ՆՇԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ՀՐԴԵՀԱՇԵՋ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

105. ԺԱՄԱՊԱՀԸ ՊՈՍՏՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

1) Պահպանել իր պոստը, չգրավվելով վոչնչով անընդհատ և անդուլ դիտողությունից:

2) *Չթողնել իր պոստը մինչև փոխվելը կամ մինչեվ հեռացվելը, վերջին դեպքում պահակապետի կամ նրա ոգնականի ներկայությամբ (հոդ. 40).*

3) ԲԱՑ ՉԹՈՂՆԵԼ ՁԵՌՔԻՑ ԶԵՆՔԸ, ՈՒՆԵՆԱԼՈՎ ԱՅՆՊԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ, ՎՈՐՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԱՐԱԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (*արգելվում է հրացանը պահել մեջքին գցած կամ ուսնիվար, բացի այն դեպքերից, յերբ հարկավոր է գործել հրաշեջ գործիքներով պոստում տեղի ունեցած հրդեհի ժամանակ*):

*Փամփուշտամանների կափարիչները պետք է արձակված լինեն և փամփուշտի ծրարները նրանցում պետք է բաց լինեն*):

4) *Չթողնել վոչ վոքի մոտենալու պոստին այն տարածությունից մոտ, վոր մատնանշված է պոստացուցակում, բացի իր ուղղակի պետերից և*



*այն անձերից, վորոնց նրանք ուղեկցում են, բացի պահակապանների ու դիտակալների հերթափոխից, վորոնք ուղարկված են պահակի կողմից:*

5) *Մութն ընկնելուց հետո և մառախուղին կանգնեցնել պոստին մոտեցողին* «կա՛ց, ով է գալիս» *բացականչությամբ: Թույլ տալ պոստին մոտենալու միայն կանգնեցրվածներից մեկին (պահակապետին, նրա ոգնականին, փոխադրին, դետքի ավագին), մնացածին թույլ տալ միայն նրանից հետո, յերբ անձամբ կճանաչի մոտեցողին:*

6) *Վոչ մի խոսակցությամբ չբռնվել կողմնակի անձանց հետ. պատասխանել միայն պահակապետի, նրա ոգնականի, փոխադրի, դետքի ավագի և իր այն ուղղակի պետերի հարցերին, վորոնց իրավունք է տրված ստուգելու պահակները.*

7) ԶԵՆՔԸ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԱՌԱՆՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ՅԵՐԲ ԲԱՑԱՀԱՅՏ ՀԱՐՁԱԿՈՒՄ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԻՐ ՅԵՎ ՀԱՐԵՎԱՆ ՊՈՍՏԻ ՎՐԱ (*դրսի պաշտպանության ժամանակ*), *ոգտագործելով հրաձգության ու քողարկման համար պոստում յեղած խրամատը, իսկ խրամատի բացակայության դեպքում տեղանքի ծալքերն ու տեղական առարկաները*, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐԻ

ԲՈՒՆԱԾ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՓԱԽՈՒՍՏԻ ԴԵՊՔՈՒՄ:

Դրա հետ միաժամանակ անմիջապես հարձակման մասին հաղորդել պահակատունը, օգտագործելով տեխնիկական և նշանաբարության այլ միջոցները:

8) Հակառակորդի ցածրացող սավառնակների հայտաբերման դեպքում, ինչպես նաև ընդհանուր օդային տագնապի ժամանակ կատարել հակաօդային պաշտպանության վերաբերյալ հատուկ «հրահանգի» կանոնները.

9) Քիմիական տագնապի ժամանակ արագ հագնել հակագազը և չհանել այն մինչև վտանգն անցնելու մասին հատուկ հրամանը, առանց թուլացնելու դիտողությունն ու պոստի պահպանությունը:

10. Գիտենալ հրաշեջ միջոցների գործադրության յեղանակները (հրաշեջներ, ավազով լիք տոպրակներ, կրակի օջախները հողով ծածկելը և այլն):

Ծանոթություն. Ժամապահի դրությունը պոստում (գտնվել զոնտի տակ կամ խրամատում, քայլել, կանգնել, նստել և այլն), ծառայություն կրելու բնույթը պոստում, ինչ է նրան հանձըն-



վաճ, մինչև ինչպիսի տարածության վրա դեպի պոստը կարելի չի թույլատրել կողմնակի անձանց (ըստ տեղական առարկաների), ինչպես նաև հատուկ պարտականությունները պոստում փոխանցվում են պոստացուցակով:

106. Պոստի մոտերքում ամեն տեսակի անկարգությունների դեպքում, թույլ չտալով պոստին մոտենալու պոստացուցակում մատնանշած տարածություններից մոտ, ժամապահը պահանջում է դադարեցնել անկարգությունը, իսկ անհաջողության դեպքում կանչում է փոխադրին, օգտագործելով նշանաբարության բոլոր միջոցները, մինչև վերը կրակելը ներառյալ:

107. Պոստի վրա կամ նրա մոտերքում հրդեհ և տարերային այլ աղետներ հայտաբերելու դեպքում, ժամապահն անմիջապես այդ մասին հաղորդում է համապատասխան պայմանական նշանով պահակատանը, ձեռք առնելով բոլոր միջոցները վտանգի վերացման համար (միայն պոստում):

Նույնպես է վարվում հանկարծակի հիվանդության դեպքում:

108. ԺԱՄԱՊԱՀԻՆ ՊՈՍՏՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է. ԾԽԵԼ, ՈՒՏԵԼ, ԽՄԵԼ, ԵՐԳԵԼ, ԸՆԴՈՒՆԵԼ



5204 5

ՎՈՐԵՎԷ ՕՌԱՐԿԱ ԹԵԿՈՒԶ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՅՆ ԱՆՁԵՐԻՑ ՎՈՐՈՆՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ՆՐԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ. ՀՈԳԱԼ ՊՈՍՏՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՅԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՎՈՐԵՎԷ ԲԱՆՈՎ ՇԵՂՎԵԼ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՊՈՍՏԻ ԱՆԸՆԴՀԱՏ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ:

109. *Ժամապահի օրինավոր պահանջների չկատարումը, նրան վիրավորանք հասցնելը, հանդիսանում է մի գործողություն, վորը հետապնդվում է քրեական կարգով:*

## ԳԼՈՒԽ III

## ՊԱՀԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ (ՎԵՐԵՐԿՐՅԱ ՅԵՎ ՕԴԱՅԻՆ) ՅԵՎ ՀՐԴԵՀԻ ԺԱՄԱՆԱԿ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

110. ԹԵ՛ ԽԱՂԱՂ ՅԵՎ ԹԵ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀԱԿՆԵՐԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԵՏ. ՄԱՐՏ. ԿԱՆ 2-ՐԴ ՄԱՍԻ *կատարելով պահակների կողմից պահպանվող օբյեկտի պաշտպանության այն պլանը, վորը վաղորոք մշակում է պահապան զորամասի հրամանատարը (մշտական*



*պահպանության դեպքում տեղական հրաձիգ զոր-քերով) և քաղաքի պարետը (վոչ մշտական պահպանության ժամանակ) և հաստատում է կայազորի պետը:*

111. *Պաշտպանության պլանը վորոշում է պահակի գործողությունները պահպանվող օբյեկտի դիտողության ու պաշտպանության կազմակերպման ծառայությունը:*

*Ելնելով օբյեկտի պահպանման ընդհանուր խնդրից, պահպանության տեղական պայմաններից, յեղած ուժերից ու միջոցներից, պաշտպանության պլանի մեջ մտցվում են.*

1) *Պահակի կազմն ու սպառազինությունը:*

*ա) պահակատան տեղը.*

*բ) Նրա սարքավորումը հակոդային ու հակաքիմիական պաշտպանության տեսակետից (ճեղքային (* щелевые *) ու քիմիական ապաստարաններ) և հուսալի կապը պոստերի ու պահակների (զորամասի) որապահի հետ.*

*գ) պահակը մարտակարգի անցնելու արագությունը.*

3. *Դիտողության միջոցառումներ.*

*ա) ցերեկվա ու գիշերային պոստերի թիվը.*

*բ) չներով պահպանվող պոստերը.*

4) Կապի միջոցներն ու յեղանակները. տեխնիկական կապ (հեռախոս, ելեկտրական զանգեր), լուսատու կապ (լամպեր, լապտերներ), ձայնական կապ (սուլիչներ) և սովորական կապ (վոտավոր, ձիավոր ու հեծանվավոր) թե պահակների որապահի և թե պոստերի հետ։

5) Որյեկտի ամբողջ պահպանվող տերիտորիան սեկտորների բաժանելը, ըստ ջոկերի թվի, վորոնք գլխավորվում են փոխադիրների (ջոկհրամանների) կողմից։

6) Պաշտպանություն.

ա) գիրքերի սարքավորումը թե պոստերում ժամապահների և թե ամբողջ պահակի համար, հաշվի առնելով լավագույն դիտողության, զենքի ոգտագործման, քողարկման ու հակոդային և հակաքիմիական պաշտպանության պայմանները.

բ) Պահակի ոգտագործման հնարավոր վարիանտները պոստերի կամ պահպանվող որյեկտի վրա հարձակման դեպքում, ինչպես նաև պահակի գործողությունների վարիանտները ոդային ու քիմիական հարձակման և հրդեհի ժամանակ։

7) Պահակի ուժեղացման միջոցառումները գիշեր ժամանակ ու հարձակման դեպքում։

8) Հակահրդեհային միջոցներ պահակատանն ու պոստերում և այդ միջոցների ոգտագործման յեղանակները։



112. Պաշտպանության պլանի այն մասը, վոր վերաբերում է պահակի գործողություններին, պետք է գտնվի պահակատանը պահակապետի մոտ.

1) վորպես հրահանգ պահակապետին, նրա մաս-
ոգնականին, փոխադրին, վորտեղ պետք է մա-
նանշված լինեն պարտականություններն ու գործ
ղությունները հարձակման ու հրդեհի ժամանակ.

2) վորպես գրաֆիկ պլան-սխեմա (հավելված
9), վորի վրա պետք է գծագրված լինեն.— տե-
ղանքի ռելյեֆը, պոստերի գաղտնքների ու պահա-
կատան տեղերը, դեպքի չարժման ճանապարհ-
ները, դիտողության ու պաշտպանության սեկ-
տորները պահակի յուրաքանչյուր ջոկի համար,
պետք է ցույց տրված լինեն կապի միջոցներն ու
յեղանակները, պետք է ցույց տրված լինեն հե-
ռավորությունները պահակատնից մինչև պոստերն
ու գիրքերը (խրամատները), ինչպես նաև մին-
չև կարևորագույն տեղական առարկաները, վորոնք
մատույց են հանդիսանում հարձակվողի համար։

Ծանոթություն. գրաֆիկ պլանի վրա չեն հիշատակվում պահպանվող որյեկտի մասին մանրամասնությունները, ինչպես որինակ՝ պահեստարանների, անգարների, ելեկտրասարքավորման և այլոց տեղերն ու բնույթը։

## ՊԱՀԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

113. Վորևէ սեկտորում պոստերից մեկն ու մեկի վրա հարձակման դեպքում պահակապետն անմիջապես այդ սեկտորն է ուղարկում համապատասխան ջոկ, նպատակ ունենալով.

1) յետ մղել հարձակումը կամ պաշտպանել հանձնարարած սեկտորը, յեթե հարձակումն զգալի ուժերով է կատարվում.

2) Բռնել հարձակվողներին, յեթե դրանք առանձին չարագործներ են կամ փոքրիկ խմբակ է:

Միաժամանակ պահակապետը մարտական պատրաստության է բերում պահակի մնացած կազմին, դեպք է ուղարկում պարագան պարզելու համար, միջոցներ է ձեռք առնում հուսալի կապ պահպանելու համար՝ ուղարկված ջոկի, պոստերի ու կայազորի պահակների (զորամասի) որապահի հետ և զեկուցում է ամբողջ անցուդարձի մասին պահակների (զորամասի) որապահին:

114. Յերբ հարձակում է հայտաբերվում միաժամանակ մի քանի պոստերի վրա, պահակն անմիջապես անցնում է մարտակարգի և գործում է կատարելով օբյեկտի պաշտպանության պլանը համաձայն Հետ. Մարտ. Կան. 2-րդ մասի 639-656 և 688 հոդվածների:

Ծանոթություն 1. Տագնապային պարա-



գայի դեպքում, յերբ պոստերը պահակատնից մեծ հեռավորության վրա յեն ցրված, ջոկերը կարող են առաջ քաշվել դեպի իրենց սեկտորների ռայոնները, կապ պահպանելով պահակապետի հետ: Այդպիսի դեպքերում ջոկերը կատարում են դաշտային պահակի դեր:

Ծանոթություն 2. Յերբ պահակն է գալիս ուղղակի պետերից մեկը, պահակապետը զեկուցում է պատահարի և ընդունած վճռի մասին, հետագայում կատարելով յեկած պետի ցուցումները:

115. Ստանալով խնդիրը պահակապետից (հոդվ. 113), փոխադիրը (ջոկի հրամատարը) ծածկված տանում է իր ջոկն ամենակարճ ճանապարհով դեպի յելակետը (վաղօրոք պատրաստված դիրքը):

Պարզելով հարձակման ուժն ու բնույթը, նա վճռում է.

ա) օգտագործել ամբողջ ջոկը կրակային դիմադրության համար (այն դեպքում, յերբ հարձակվում են թշնամու զգալի ուժեր), համաձայն Հետ. Մար. Կան. 2-րդ մասի 643-րդ և 713-րդ հոդվածների, կամ

բ) Թողնելով դիրքում լավագույն հրաձիգնե-

րին ու ձեռքի գնդացիրը (յեթե գնդացիր տրված է) կրակային գործողության համար, ինքը մնացած մարդկանցով գրոհում է հարձակվողներին (յեթե փոքր խմբակ է՝ 3–5 մարդուց բաղկացած), դուրս գալով թեն ու թիկունքը և ձգտելով բռնել նրանց, գործելով այդ դեպքում համաձայն Հետ. Մարտ. Կան. 2-րդ մասի 674 –692 հոդվածների, սակայն չհեռանալով պոստից ավելի քան 500 մետր:

## 3. ՊԱՀԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱԶԴԱՆՇԱՆՈՎ

116. ՊԱՀԱԿԻ ԱՄԲՈՂՋ ԿԱԶՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԼԱՎ ԳԻՏԵՆԱԼ ՅԵՎ ԱՐԱԳ ԸՆԴՈՒՆԵԼ ՈԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՅՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ, ՎՈՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՈԲՅԵԿՏԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ ԿԱՄ ՀԱԿՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՈՒՄ:

Ոդային տագնապի ազդանշանով և պահակապետի կամ նրա ոգնականի «Սավառնակ» հրամանով պահակի բոլոր ազատ մարդիկ արագ վերցնում են զենքերն ու հակագազերը և գրավում են ճեղքային ապաստարանները (щелевые убежища), հաստատելով ոդի դիտողություն:

Կրակը բացում են միայն հատուկ հատկացված գնդացրերով ու պահակապետի հրամանով:



Գիշեր ժամանակ պահակներն անցնում են ոդային հարձակման պայմանների լուսավորության:

118. Հրապաշարն ու պահակատունը պահպանելու, հրդեհի մասին զգուշացնելու և կապ պահելու համար պահակների (զորամասի) որապահի հետ, պահակապետի կարգադրությամբ պահակատանը թողնվում են 2 հոգի:

119. Ոբյեկտի դրսի պահպանությունն ապահովվում է նրանով, վոր ուժեղացվում են ամենից կարևոր պոստերը ձեռքի գնդացրերով ու նռնաձիգների խմբակով՝ ոդային հնարավոր դեսանտի դեմ գործելու համար:

120. Հակառակորդի համակցված հարձակման դեպքում (ռմբակոծում ոդից և սավառնակներից իջած դեսանտի գործողություններ) պահակն ոգտագործվում է միայն դեսանտի դեմ այն կարգով, ինչ մատնանշված է 113—115 հոդվածներում:

## 4. ՊԱՀԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԻՄԻԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ԱԶԴԱՆՇԱՆՈՎ

121. ՊԱՀԱԿԻ ԿԱԶՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԼԱՎ ԳԻՏԵՆԱԼ ՔԻՄԻԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԹԵ ԻՆՉ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՅԴ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐՈՎ:

122. Քիմիական վտանգի ազդանշանով պահակի բոլոր մարդիկ, որտեղ էլ նրանք գտնվելիս լինեն, անմիջապես հագնում են հակագազերը: Սպասարկող անձնական կազմը (շնապանները, ձիավոր լրատարները), բացի դրանից, հագցնում են իրենց կենդանիների հակագազերը:

Հետագայում, օգտագործելով հակաքիմիական պաշտպանության միջոցները, պահակը կարող է.

ա) Մնալ պահակատանը, յեթե պահակատունը հարմարեցված է այդ նպատակի համար (դռներն ու լուսամուտներն անմիջապես փակվում են) կամ

բ) Գրավել ապաստարանը, թողնելով հերթապահներ (2 հոգի) պահակատանը պահպանության ու կապի համար:

123. Յերբ միաժամանակ համակցված յեղանակով հարձակում է գործվում (ռմբակոծում, թունավորում և վերերկրյա հարձակում), պահակը գործում է համաձայն 113—115 հոդվածների ցուցումների, ձեռք առնելով հակաքիմիական պաշտպանության միջոցներ:

124. Հարձակման ժամանակ վիրավորներին ու թունավոր նյութերով թունավորվածներին պահակապետը կամ նրա օգնականն անմիջապես ուղարկում է բժշկական օգնության մոտակա կե-



տը, պահանջելով զորամասի օրապահից մարդ ուղարկել նրանց փոխարեն:

125. Պաշտպանական հագուստ (որտեղ այդպիսին կա) առաջին հերթին տրվում է պահակային ծառայությունն անմիջորեն կատարողներին (ժամապահներ, փոխադիրներ, դիտակալներ, գաղտնքներ, կապի լրատարներ)։

Պահակներին պաշտպանական հագուստ մատակարարելը կատարվում է միայն պատերազմի ժամանակ՝ պահպանության յուրաքանչյուր օբյեկտի համար սահմանած հատուկ ցուցակներով:

126. Հանել հակագազերը, դուրս գալ ապաստարաններից և այլ ծածկարաններից թույլատրվում է միայն հրամանով և վտանգն անցնելուց հետո:

## 5. ՊԱՀԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԴԵՀԻ ԺԱՄԱՆԱԿ

127. ՊԱՀԱԿԻ ԱՄԲՈՂՋ ԿԱԶՄԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ ՀՐԴԵՀԻ ՏԱԳՆԱՊԻ ՀՐԱՀԱՆԳԸ, ՊԱՀՊԱՆՎՈՂ ՈԲՅԵԿՏՈՒՄ ՍԿՍՎԱԾ ՀՐԴԵՀԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՏԵՂԵՐԸ (ՀԵՌԱԽՈՍՆԵՐ, ԻՆԴՈՒԿՏՈՐՆԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ) ՅԵՎ ՆՐԱՆՑԻՑ ՈԳ-

ՏՎԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ (ՄՈՏԱԿԱ) ՀՐԴԵՀԱՇԵՋ ԽՄԲԻՆ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՐԴԵՀԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԴԵՊՔԻ ՀԱՄԱՐ:

Ծանոթություն.— *Անհրաժեշտ հրահանգներն ու կանոնները մշակում է օբյեկտի պետը հրդեհաշեջ տեսչության ներկայացուցչի հետ միասին և հաստատում է կայազորի պետը:*

128. *Պոստում, պահակատանը, կամ նրանց մոտերքում առաջացած հրդեհի նշաններ հայտաբերելու դեպքում պահակի կողմից յուրաքանչյուրը (ժամապահ, դիտակալ), ով առաջինն է նկատում այդ, պարտավոր է տալ հրդեհի սահմանված ազդանշանը, վորպեսզի հաղորդի մոտակա հրդեհաշեջ խմբին և տեղեկացնի այդ մասին պահակապետին: Վերջինս հրդեհի մասին զեկուցում է պահակների (զորամասի) օրապահին, հաղորդում է հերթապահ զորական մասին և մինչև հրդեհաշեջ խմբի գալը միջոցներ է ձեռք առնում փրկելու գույքը և հրդեհը դադարեցնելու յեղած հրաշեջ միջոցներով:*

129. *Գույքը հափշտակումից պահպանելը և պահակատան կամ* 200–300 *մետրից վոչ ավելի*



*հեռու մոտակա պոստերի ռայոնում առաջացած հրդեհի ժամանակ կարգ պահելը հանձնարարվում է պահակին, մինչև հերթապահ մասի գալը:*

## ԳԼՈՒԽ IV

## ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱԿԱՇՆԵՐՈՎ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

130. Պահակաշները գործադրվում են, վորպես օժանդակ միջոց, վոր ուժեղացնում է պահպանության աչալրջությունը, միաժամանակ կրճատելով պահակային պոստերի քանակը:

Ծանոթություն.— *Պահակային շների գործադրությամբ պահպանության կազմակերպման ժամանակ ժամապահների թիվը կրճատել թույլատրվում է միայն նրանից հետո, յերբ շները կընտելանան իրենց պոստերին և ստուգված կլինի նրանց կողմից ծառայության կրելը:*

131. ՊԱՀԱԿԱՇՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՋՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՊԱՆ ՄԱՍԻ ԱՄԲՈՂՋ ԿԱԶՄԸ ՊԵՏՔ Է ԼԱՎ ԾԱՆՈԹ ԼԻՆԻ ԱՅԴ ՇՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ԻՍԿ ՇՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳՈՂՆԵՐԸ, ԲԱՑԻ ԴԸՐԱՆԻՑ, ՊԵՏՔ Է ԾԱՆՈԹ ԼԻՆԵՆ ՆԱԵՎ ՇՆԵՐԻ

ՎԱՐԺԵՑՄԱՆ (դրեսիրովկայի) ՑՈՒՑԱՆԱԿՆԵ-ՐԻՆ:

Ծանոթություն.— Պահպանվող օբյեկտի տերիտորիայում բացի ծառայական շներից կողմնակի շներ ունենալ չի թույլատրվում:

132. Պահակում ծառայության համար շները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

ՊԱՀԱԿԱՇՆԵՐ

ա) ազդանշացնեն ժամապահին վոչ պակաս պահ-պանման ժամանակ, հաչելով, յերբ իր պոստին դրսի կողմից կողմնակի անձ է մոտենում վոչ պա-կաս քան 40 մետրից.

բ) ազատ պահպանության ժամանակ ազդա-նշացնեն հաչոցով մոտակա պահակային պոստին կողմնակի անձի մոտեցման մասին, իսկ յերբ կողմնակի անձնավորությունը մտել է պահպա-նության ռայոնը, պահակաշունը պետք է կռվի բռնվի նրա հետ:

2. ՊԱՀԱՊԱՆ ՇՆԵՐ

Գտնվելով դաղտնքում իրենց շնապանի հետ, պետք է ազդանշացնեն վերջինիս վոչ պակաս քան 40 մետրից կողմնակի անձի մոտեցման մասին, թե-թևակիորեն առաջ նետվելու միջոցով:

3. ԽՈՒԶԱՐԿՈՒ ՇՆԵՐ

Պետք է շրջագայեն շնապանների հետ միասին



բլոկ-պոստի առջևում ընկած տեղամասի շերտում 100–200 մետրի վրա:

133. Սպասարկող անձնական կազմը (ջոկի հրամանատարը, շնապանները) մտնում է պահակի կազմի մեջ ու յենթարկվում է պահակապետին: Կատարելով մասնագիտական ծառայության պար-տականություններ, նրանք կարող են օգտագործ-վել բացառիկ դեպքերում (հարձակում և այլն) ուժեղացնելու և յերկարացնելու համար կապը պա-հակում:

134. Պահակային շները ծառայությունը կը-րում են, վորպես կանոն, գիշերով և, վորպես բացառություն ցերեկով վատ յեղանակին (մառա-խուղի, անձրևի, բքի ժամանակ): Պոստերում շների մնալու ժամկետի կրճատումը սատիկ սառ-նամանիքներին կամ նրանց պոստերի վրա կար-գելը սահմանված ժամանակից շուտ կատարում է պահակապետը, յելնելով յուրաքանչյուր առան-ձին դեպքում կլիմայական պայմաններից ու պոս-տերի դասավորման բնույթից:

135. Պահակաշների ծառայությունը պոստե-րում ստուգում են այն անձինք, վորոնք իրավունք ունեն ստուգելու պահակները (Հոդ. 53):

Ստուգումը կատարվում է համաձայն ԲԳԿԲ

ռազմական ծառայության շների օգտագործման Ձեռնարկի։

136․ Պահակային շների կանոնավոր մարզանքի ու ծառայության համար պատասխանատվությունն ընկնում է պահապան մասի պետի վրա։

## 2․ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԸՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼԸ ՅԵՎ ՊԱՀԱԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

137․ Պահակաշան պոստ կոչվում է ա) տեղանքի այն հարմարեցրած տեղամասը, կամ այն կետը տեղանքում, որը հնարավորություն է տալիս պահակաշանը հատուկ հանդերձանքում ժամանակավոր մնալը (անազատ պահպանում)․ բ) փակ շենքը կամ տեղանքի չորս կողմից այն փակ տեղամասը (բակ և այլն), նրա ներսում պահակաշան տեղավորման հետ (ազատ պահպանում)։

138․ ՊԱՀԱԿԱՇԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ, այդ պատճառով շան պոստի հեռացումը պահակատնից չի թույլատրվում, վոր ավելի լինի քան շան ազդանշանի (հաջոցի լսելիության հեռավորությունն է։



139․ Շան պոստերը սահմանվում են պահակային պոստերի առջևում և հարձակման տեսակետից ամենից վտանգավոր տեղերում 40-ից մինչև 150 մետրի վրա կամ այդ պոստերի գծի վրա (արանքներում սանդղաձև դեպի առաջ)։

Նրանք կարող են լինել․

1) ՇԱՐԺԱԿԱՆ-ԲԼՈԿԻ (ճախարակի) վրա, յերբ շանը հանձնարարվում է տեղամաս 20-ից մինչև 40 մետր լայնությամբ՝ կտրտված տեղանքում և մինչև 80 մետր՝ բաց տեղանքում․

2) ԱՆՇԱՐԺ, յերբ շանը հանձնարարվում է նեղ տեղ, ինչպես օրինակ՝ յերկաթուղու փորատ, ձոր և այլն (հավելված 9)։

Պահակաշների պոստերի սարքավորումը տես հավելված № 7։

140․ Պահպանության սիստեմի մեջ պահակաշներ մտցնելու և նրանց ըստ պոստերի բաշխման ժամանակ հաշվի յե առնվում պահպանության օբյեկտի բնույթը, նրա դասավորությունը, մատույցները, նրանց կարևորությունը և շների առջևում կրակային ծածկույթ ստեղծելու հնարավորությունը։

ռազմական ծառայության շների օգտագործման Ձեռնարկի։

136․ Պահակային շների կանոնավոր մարզանքի ու ծառայության համար պատասխանատվությունն ընկնում է պահապան մասի պետի վրա։

## 2. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԸՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼԸ ՅԵՎ ՊԱՀԱԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

137․ Պահակաշան պոստ կոչվում է ա) տեղանքի այն հարմարեցրած տեղամասը, կամ այն կետը տեղանքում, վորը հնարավորություն է տալիս պահակաշանը հատուկ հանդերձանքում ժամանակավոր մնալը (անազատ պահպանում)․ բ) փակ շենքը կամ տեղանքի չորս կողմից այն փակ տեղամասը (բակ և այլն), նրա ներսում պահակաշան տեղավորման հետ (ազատ պահպանում)։

138․ ՊԱՀԱԿԱՇԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ, այդ պատճառով շան պոստի հեռացումը պահակատնից չի թույլատրվում, վոր ավելի լինի քան շան ազդանշանի (հաչոցի լսելիության հեռավորությունն է։



139․ Շան պոստերը սահմանվում են պահակային պոստերի առջևում և հարձակման տեսակետից ամենից վտանգավոր տեղերում 40-ից մինչև 150 մետրի վրա կամ այդ պոստերի գծի վրա (արտաքիններում սանդղաձև դեպի առաջ)։

Նրանք կարող են լինել․

1) ՇԱՐԺԱԿԱՆ–ԲԼՈԿԻ (ճախարակի) վրա, յերբ շանը հանձնարարվում է տեղամաս 20-ից մինչև 40 մետր լայնությամբ՝ կտրտված տեղանքում և մինչև 80 մետր՝ բաց տեղանքում․

2) ԱՆՇԱՐԺ, յերբ շանը հանձնարարվում է նեղ տեղ, ինչպես որինակ՝ յերկաթուղու փորատ, ձոր և այլն (հավելված 9)։

Պահակաշների պոստերի սարքավորումը տես հավելված № 7։

140․ Պահպանության սիստեմի մեջ պահակաշներ մտցնելու և նրանց ըստ պոստերի բաշխման ժամանակ հաշվի յե առնվում պահպանության օբյեկտի բնույթը, նրա դասավորությունը, մատույցները, նրանց կարևորությունը և շների առջևում կրակային ծածկույթ ստեղծելու հնարավորությունը։

141. Պահակաշների պոստերի և պահպանության սիստեմի քողարկումը ձեռք է բերվում պարբերաբար պոստերի տեղերի փոփոխումով, անպայման մարզելով շներին նոր տեղում յերկու-յերեք օրվա ընթացքում։

142. Պահակաշան ծառայության առավելագույն տևողությունը պոստում առանց փոխվելու օրական 10 ժամ է։

Մարդկանց ու պահակաշների համրանքի ժամանակ յելնել. յուրաքանչյուր 4 շան 2 մարդ հաշվով, վորոնցից մեկը շնապանը և մյուսը՝ շնապանի օգնականը։

143. Շնապաններին պահակաշներով պոստերն ուղարկելուց առաջ ստորաբաժանման հրամանատարը կամ ավագ-շնապանը հավաքում է շնապաններին, նշանակում է վերակարգի, ստուգում է, թե ինչ չափով են շնապաններն իմանում իրենց պարտականությունները, հավաստիանում է հանդերձանքի սարքինության մեջ և լրացնում է վերակարգի մատյանի առաջին յերեք սյունակը (հավելված № 8)։

Ծանոթություն.— Պահակաշներին պոստերն ուղարկելու ժամանակը հարմարեցվում է պոստերի հեռավորությանը պահաշենքից։



144. Շներին պոստերի վրա դասավորելուց առաջ պահակապետի մասնագիտական ծառայության օգնականը ներկայանում է պահակապետին և, նրանից ցուցումներ ստանալով, պահակապետի օգնականի հետ միասին դասավորում է շներին ըստ պոստերի։

145. Շների դասավորության ժամանակ յուրաքանչյուր շնապան տանում է 2 շնից վոչ ավելի (յերկու ձեռքին մի մի շուն կամ միասին) դնչակալներով և նախապես ծանոթացնելով շներին միմյանց հետ։

146. Բլոկ-պոստին հասնելով, շնապանը մոտենում է հերթապահ շան հետ բլոկին, զննում է ամբողջ բլոկ-պոստի դրությունը (շղթա, բլոկ), ամրացնում է շղթան շան վզկապին, հանում է դնչակալը և սանձը։

Ծանոթություն.— Շների դասավորությունը անջատ և ազատ պոստերում կատարվում է սույն հոդվածի համեմատ։

147. Շների ըստ պոստերի դասավորությունն ավարտելուց հետո պահակապետի մասնագիտական ծառայության օգնականը զեկուցում է այդ մասին պահակապետին, վերջինս ընդունելով զեկուցումը, լրացնում է մատյանի 4-րդ սյունակը (հավելված № 8)։

**Ծանոթություն**.— Եթե վորևէ պատճառով շունը մեկ կամ մի քանի բլոկների վրա դրված չէ, պահակապետն անմիջապես զեկուցում է զորամասի որապահին և նշում է այդ մասին պոստային տեղեկագրում։

148. Լսելով առջևվում գտնվող կամ նրա հարևան շան հաչոցը, ժամապահն անմիջապես հաղորդում է այդ մասին պահակատունը սահմանված ազդանշանով և միջոցներ է ձեռք առնում հայտաբերելու մոտեցողին, ուժեղացնելով զգոնությունը։ Եթե շան հաչոցի հետ միաժամանակ ժամապահը հայտաբերում է նաև հարձակվող շան պոստի կամ հենց շան վրա, կրակ է բացում, օգտագործելով դրա հետ միասին և խուզարկու շանը։

149. Ազդանշաններ ստանալով պոստից, կամ անմիջորեն լսելով շան հաչոցը, պահակապետն այդ պոստը հետախուզելու նպատակով անմիջապես ուղարկում է գետք շնապանի և 2 պահակապանի կազմով այն ջոկից, վորի սեկտորում լսվում է հաչոցը։

Շան պոստում կողմնակի անձեր չհայտաբերելու դեպքում, յերբ շունը շարունակում է հաչել և առաջ նետվել, կանչվում է խուզարկու շանը.



Օգտագործելով խուզարկու շան օգնությունը, գետքը ճգտում է բռնել միայնակ կողմնակի մարդկանց կամ բռնել կրակով հարձակվողների խմբակին, միաժամանակ զեկուցելով այդ մասին պահակապետին մոտակա պահակային պոստի միջոցով։

150. Խուզարկու շան կողմից առջևվում յեղած տեղանքի լուսաբանումը կատարվում է բնական հետաղոտումով, շնապանի յետևից գնում են դիտակալները։ Զարագործ հայտաբերելու դեպքում գետքը բռնում է նրան, օգտագործելով դրա համար խուզարկու շանը։

151. Պոստերից պահակաշներին հանելու սահմանված ժամանակ պահակապետը լրացնում է վերակարգի մատյանի 7-րդ սյունակը և ստորագրում է այն։ Հրամայում է իր մասնագիտական-ծառայության ոգնականին հանել շներին պոստից։ Դրանով վորոշվում է այն մոմենտը, յերբ շների ստորաբաժանումները դուրս են գալիս պահակապետի ստորադասության տակից։

152. Պահակաշներին պոստերից հեռացնելու ժամանակ շնապանները զննում են շների դրությունը, հագցնում են նրանց դնչակալները և տանում են նրանց շենքը։

## 3. ԽՈՒԶԱՐԿՈՒ ՇՆԵՐ

153. Խուզարկու շներն օգտագործվում են չարամիտներին գտնելու համար թե պահպանության օբյեկտի ներսում և թե նրա սահմաններից դուրս, սակայն պահակների պահպանած շերտում:

Այդ նպատակով խուզարկու շունը կարող է օգտագործվել.

ա) զննելու համար իր առաջնորդի հետ առանձին շենքերը կամ պահպանվող օբյեկտի ամբողջ ռայոնը.

բ) զննելու համար պահպանության արտաքին սեկտորները (պահակային պոստերի գծից դուրս):

154. Չարագործներին «հետքերով» գտնելու համար խուզարկու շունն օգտագործվում է մինչև 100 մետր լայնությամբ և մինչև 5 կիլոմետր երկարության շերտում:

Աշխատանքի վայրը շան գալու ժամանակը չպետք է 2 ժամից ավելի լինի այն մոմենտից, յերբ պատահարը տեղի յե ունեցել պահակում կամ պոստերում:

155. Որպես կանոն, խուզարկու շունը գործադրվում է այն վայրերում կամ ռայոններում,



որտեղ կողմնակի մարդկանց մնալը որոշ ժամանակից հետո չի թույլատրվում:

Շան օգտագործումը «հետքով» աշխատանքի համար բնակավայրերում և մարդկանց մասսայի շարժման վայրերում չի թույլատրվում:

156. Խուզարկու շների և սպասարկող կազմի թիվը, նրանց պահումը պահպանության յուրաքանչյուր օբյեկտի համար որոշվում է հաստիքներով իսկ օգտագործման կարգը որոշում է պահպանվող օբյեկտի պետը:

157. Պահակային պոստերի առջևի տեղանքի զննության ժամանակ խուզարկու շունը առաջնորդի կամ նրա օգնականի հետ մտնում է դետքի կազմի մեջ, որի ավագը դառնում է շան առաջնորդը:

158. Խուզարկու շան դուրս կանչելը կատարում է պահակապետը:

159. Երբ անհրաժեշտ է չարագործին փնտրել հետքերով, պահակապետը կամ նրա օգնականը ձեռք են առնում բոլոր միջոցները մինչև շան գալը հետքերն անձեռնմխելի պահելու համար:

160. Շան աշխատանքն արձանագրվում է այդ պահակի պոստային տեղեկագրում, որի տերրիտորիայում օգտագործվել է շունը:

«Հաստատում եմ»
«.........» ......................1931 թ.
Շրջանի զորքերի հրամանատար

Հավելված № 1
Հոդ. 4-րդի առթիվ

# ՑՈՒՑԱԿ

№ կայազորում (պահեստում, ոսլիզոնում, զորամասում)

1931 թ. համար

| Ռայոնների կամ պահպանության առանձին օբյեկտների ցուցակն ըստ զորական մասերի և պահակների անունը | Պոստերի թիվը: Եռափոխ | Երկփոխ | Պահակաշ. պոստեր | Ընդամենը | Պահակի: Պահակապետ | Պահակապ. օգնակ. | Փոխադիր | Պահակապաններ | Կազմը: Լրատարներ հետիոտն ու ձիավոր | Ուղեկցավոր | Ուղեկցող | Շնապան | Պահակաշներ | Ձիեր կամ հեծանիվներ | Ընդամենը: Մարդիկ | Ձիեր կամ հեծանիվներ | Շներ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. Սոկոլնիկյան ռայոն. պահակն № հրաձիգ գնդից 1) № ............ պահեստի մոտ. պահակ № 1 . . . | 6 | 5 | 4 | 1 | 1 | 1 | 3 | 2 | *) 0/2 | — | — | 1 | 4 | **) 0/2 | 36 | 0/2 | — | 4 | *) Համարիչով ցույց են տրված հետիոտն, իսկ հայտարարով ձիավոր լրատարները։ |
| 2) Կ..տակոն-հեռագրատական բնաթարանի մոտ պահակ № 2 | 5 | 3 | — | 8 | 1 | 1 | 2 | 21 | — | — | — | — | — | — | 25 | — | — | — | **) Համարիչով ցույց են տրված հեծանիվները, իսկ հայտարարով՝ ձիերը։ |
| Բ. Խամովնիկյան ռայոն. պահակներն № հ ածիգ գնդից՝ 1) կայազորային պահանոցում՝ պահակ № 3 և այլն | 4 | 2 | — | 6 | 1 | 1 | 2 | 16 | — | 2 | 2 | — | — | — | 24 | — | — | — | ***) Երբ կայազորային առանձնակներից դուրս գտնված պահպանության օբյեկտները պահպանվում են շարունակ տեղ-հրաձիգ զորամասերով պահակային վերակար, |
| Գ. Կրասնո-Պրեսնենյան ռայ. № պահակ № տեղ. հրաձիգ գումարտակից | | | | | | | | | | | | | | | | | | | ապա ցուցակը կազմում է օբյեկտի (պահեստի, պոլիգոն, աերոդրոմ, և այլն) պետը։ |
| ***) 1 Գլխավոր հրապարակ. պահեստի բաժանմ. պահակ № 4 | 8 | 2 | 4 | 14 | 1 | 1 | 3 | 28 | 2/3 | — | — | 1 | 4 | 3/0 | 30 | — | 3 | 4 | |
| 2) № աերոդրոմում. պահակ № 5 . . . | 4 | 8 | 8 | 20 | 1 | 1 | 3 | 28 | 0/5 | - | - | 3 | 3 | 5/0 | 41 | — | 5 | 8 | |
| Ընդամենը . . | 27 | 2 | 16 | [illegible] | 5 | 5 | 13 | 121 | 2/10 | 2 | 2 | 16 | 16 | 3/2 | 165 | 0/2 | 8 | 16 | |

Կայազորի պետ՝ (ստորագրություն)

«Հաստատում եմ»
«..........» ................................ 1930 թ.
Կայազորի պետ
(գնդի հրամ-ար կամ պահեստապետ)

Հավելված № 9

# ՊՈՍՏԵՐԻ ՑՈՒՑԱԿ

№ 2 ..................................

պ ա հ ա կ ի — 6-րդ հոդվ. առթիվ

| Պահակի կազմը | Պահպանութ. սեկտ. (օբյեկտները) և նրանց պետերը | Պոստերի №-ները, անուններ. և ինչ է գտնվ. հանձն. տակ | Ժամապահների հատուկ պարտականությունները | Զենքի գործադրության կարգը |
| --- | --- | --- | --- | --- |
| Պահակապետ (դաս. հրամանատար) 1 | Ցեխ կաթսծի ճյուղ, պահակատուն № 2 կոնտրոլ բուդկան (սխեման № 7 հավելված) | Պոստ № 1 յերկաթգծի փորատի մոտ (յեռափոխ) Հանձնումն տակ գտնվում է (թվել փաստացի հանձնումը): | 1. Դիտել սեկտորում. յերկաթգծի փորատը - պահակատունը: 2. Թույլ չտալ վոչ մի կողմնակի անձ դեպի լարափակոցի գիծը: 3. Անմիջապես հաղորդել պահակատուն աղջեում պոստի վրա գտնվող շան հաչոցի մասին: | |
| Նրա օգնականը 1<br>Փոխադիրներ . . 3<br>Պահակապաններ 28<br>Հեծանվորդ լրատար . . . 2<br>Շնապան . . . 3<br>Պահակաշուն . . . 8<br>Պոստեր . . . . 20<br>Վորից յեռափ. 4<br>յերկփոխ . 8<br>Պահպ. շներով 8 | 1 փոխադիր | Պոստ № 2 պահեստային մառանի մոտ (յերկփոխ-գիշերով) դրվում է պահակապետի կարգադրությամբ հիմնական պոստերից փոխված պահակապանների կազմից. Փոխելը ժամը 1 անգամ: | 1. Բաց չթողնել վոչ մի կողմնակի անձ դեպի պահեստարան, առանց պահակապետի թույլտվության, բացի պահակի կազմի անձերից և իր ուղղակի պետերից: 2. Դիտել յերկաթուղու փորատի կողմը: 3. Անմիջապես հաղորդել պահակապետին սահմանված պարզ ազդանշանները, վոր լսվում են №№ 1 և 3 պոստերից: և այլն | Զենք չի գործադրում առանց պահակապետի կամ նրա օգնականի, բացի իր կամ հարևան պոստի վրա կամ պահակատան վրա գործած բացահայտ հարձակման դեպքում: |
| | Պահպանման օբյեկտի փակոցի հարավ արևմտյան յեզրի մոտ ձորակը: և այլն | Անշարժ պոստ № 1, պահպանվում է պահակ շներով յերկաթգծի փորատում: և այլն | | |

Բաղաքի պարետ կամ պահապետ

Մասի հրամանատար (ստորագրություն)

**ԽՍՀՄ**
**№.... պահեստի վարչություն**
**«...» ................ 19 թ.**
**№ ................**
**քաղ. Մոսկվա**

**Հավելված № 8**
**58-րդ հոդվ. առթիվ**

## №__________ՊԱՀԱԿԱՊԵՏԻՆ

*Թույլ տալ դեպի տեխնիկական գույքով №.. ....պահեստը ս.թ. օգոստոսի 10 (տասի) ժամի 14-ը (տասնչորսից) մինչև 18-ը (տասնևութը) պահեստի վարչության աշխատակից ընկ. Վասիլիյ Սիմյոնովիչ Միշինին:*

*Նա իր հետ ունի կնիք, կնիքի դրոշմվածք, և անձնական վկայական:*

*Թույլտուքի ժամանակ ժամապահը հեռացվում է (կամ չի հեռացվում):*

*Պահեստապետ՝*



**Հավելված № 4**
**34-րդ հոդվ. առթիվ**

## ՊՈՍՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

### Այս-ինչ պահակի

*Այս էջում գետեղվում են*

*1. Տեղեկություններ թույլտուքի մասին և այն անձերի ստորագրությունը, որոնք թույլատրված են գալու պահակի պահպանության տակ գտնվող կնքած պահեստարանները:*

*2. Հին ու նոր պահակապետերի ստորագրությունը պահակի հանձնման և ընդունելության մասին:*

---

*1. Մայիսի... ժամի 14-ին, համաձայն պահեստի ս.թ. մայիսի 12-ի № 1567 թույլտվության թույլատրված է լցել մտնել № 3 պահեստարանը պահեստի վարչության աշխատակից ընկ. Սաեպանովին:*

*Թույլտուքն ավարտված է ժամի 18-ից անց 25 րոպե:*

*Թույլտուքի ժամանակ ժամի 14-ից մինչև ժամի 18 անց 25 րոպե ժամապահը հեռացվել է:*

*Պահակապետ՝ (ստորագրություն)*

*Պահեստի վարչության աշխատակից (ստորագրություն)*

3. Պահակը հանձնեցի՝ 144-րդ հրաձիգ գնդի դասակի հրամանատար Պետրովին:

Պահակն ընդունեցի սարքին (կամ նշվում են անսարքությունները). 141 հրաձիգ գնդի դասակի հրամանատար Իվանովին:

Ծանոթություն 1. Պոստային տեղեկությունների բլանկները պետք է տպագիր կամ վիմագրատից (լիտոգրաֆիայով տպած) լինեն և բաժանվեն զորամասերի շտաբներից վաշտերին (խմբերին) անհրաժեշտ քանակով:

Պոստային տեղեկագրերի մեջ մտցվում են տեղեկությունները եջերում համաձայն եջերի վրա դրված վերնագրերի:

Ծանոթություն 2. Պահակը փոխվելուց հետո պոստային տեղեկագիրը ներկայացվում է զորամասի շտաբին:

2. Այն դեպքում երբ հերթափոխների մեջ որևէ փոփոխություն է տեղի ունեցել այդպիսին նշվում է համապատասխան սյունյակներում:

## ՊՈՍՏԱ

Պահակ № . . . .

Պահակը 144-րդ հրա

(նշանառանը) տես ծանոթություն

| Պահպան. սեկտորն. №№-ն ու անուն-ները | Վոր № փոխադիրն և պոստերը տանում և շնապանների ազգանունները | Պոստերի №№-ը | Պոստերի անուն-ները |
|---|---|---|---|
| 1-ին սեկ. Այսինչից ... մինչև | № 1-ին<br>№ 1-ին<br>ընկ. Վիշնև | № 1 յեռափոխ որակյան<br>№ 2 յերկփոխ որակյան<br>շան անշարժ պոստ № 2 | Տեխն. կ. գույքի պահեստար. մոտ<br>Կոնտրոլ դարպասի մոտ<br>№ 2 պոստի առջևում |
| 2-րդ սեկ-տոր ... Այսինչից ... մինչև | № 2-րդ<br>ընկ. Ցերեմին<br>№ 2-րդ<br>ընկ. Ցերեմին<br>ընկ. Ցերեմին<br>№ 2-րդ<br>ընկ. Ցերեմին | № 3 յեռափոխ որակյան<br>№ 3 բլոկ-պոստ<br>№ 4 յերկփոխ գիշերային<br>№ 5 պահակային<br>№ 5 բլոկ-պոստ<br>№ 6 (պահակային)<br>№ 6 բլոկ-պոստ | Հրապաշարների պահեստի մոտ № 3 պոստի առջևում<br>Պարսպի արևմտ. անկյան լար փակ մասից մինչև յերկաթգծի և. Նեղ...<br>Յերկաթգծի լարափ. մասից մինչև պուրարեվ. յեզրը ...<br>№ 5 պոստի առջևում<br>Կոնտրոլ դարպաս. լարափ. մասից մինչ հրդեհ. դիտ. աշտ.<br>№ ... պոստի առջևում |

Փոխադիրներ՝ 1-ին՝ Միխայիլ Շարով, 2-րդ՝ Ստեփան Ռեֆիմով:

Շնապան (շների ծառայությունից)=Իվան Դեվյատովսկի:

Ժամապահների փոխելը կատարվել և նորմալ, կամ յեղանակ... փոխվել են ժամը մեկ անգամ:

Պահակապետ 14 րդ հրաձիգ գնդի

Ծանոթություն. 1. Նշանառանը գրվում է պահակը



## ՑՈՒՑԱԿ

«. . . .» . . . . . 1931 թ.

Ձիգ գնդի 2-րդ վաշտից

Պահակապետ (ստորագրություն)

| Ժամապահների անուն և ազգանունները | | |
|---|---|---|
| 1-ին հերթափոխ | 2-րդ հերթափոխ | 3-րդ հերթափոխ |
| Հրաձիգ Գ. Անտոնով<br>Հրաձիգ Պ. Վասիլով | Հրաձիգ Պ. Սեմյոնով<br>Հրաձիգ Ա. Կաշնիկով | Հրաձիգ Ս. Իվանով |
| Հրաձ. Մ. Պավլով | Հրաձ. Ա. Նիկոլայեվ | Հրաձ. Վ. Սաեղանով |
| Հրաձ. Ա. Մալինով | Հրաձ. Պյոտր Սմորոդինով | |
| Հրաձ. Վ. Իվանով | Հրաձ. Մ. Ֆիլատով | |

Յերկփոխ պահեստի ավագներ՝ 1-ին՝ Նիկոլայ Սմիրնով
2-րդ՝ Նիկոլայ Սիդորով

կի փոփոխության պատճառով այսինչ պոստերի ժամապահները

պատ. հրամանատար (ստորագրություն)
փոխվելու յերկրորդ որը:

## ԱՅՍ ԵՋՈՒՄ ՆՇՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՐՎՈՒՄ

1. Պահակի ստուգողների կողմից.

2. Այն բոլոր զեկուցագրերի մասին, վոր արված են պահակապետի կողմից կայազորի օրապահին կամ պարետին.

3. Պահակում տեղի ունեցած զանազան դեպքերի մասին:





## ՊԱՀԱԿԱՏԱՆ ՈՒ ՊՈՍՏԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

1. Պահակատունը բաղկացած ե հետևյալից.

ա) ընդհանուր շենք պահակի կազմի համար հետևյալ սենյակների ստորաբաժանումով (վորտեղ 5 պոստից ավելի չե.) հանգստի համար (նույնը և Լենանկյուն), մեծ սենյակ զենքը-տեղավորելու, կերակուր ընդունելու և այլի համար.

բ) առանձին սենյակ պահակապետի ու նրա օգնականի համար, վորը պետք ե միացված լինի անմիջական դռնով պահակի կազմի սենյակի հետ.

գ) առանձին սենյակ պահապանի (ստորոժի) համար, օջաղով կերակուրը տաքացնելու համար և սեղանով՝ զենքը մաքրելու (սրբելու) համար.

դ) լվացարան և արտաքնոց.

ե) կոշիկների ու փաթաթանների չորանոց:

2. Պահակի կազմի ընդհան[illegible] սենյակում գտնվում են.

ա) պոստացուցակներն ու ժամապահների հատուկ հրահանգները.

բ) ժամացույց, յերկու սեղան. մեկն՝ ընթերցանության ու գրավոր աշխատանքների և

մյուսը՝ ճաշելու համար և անհրաժեշտ քանակով աթոռներ․

գ) բուրգեր հրացանների, ձեռքի գնդացրերի ու հակագազերի համար․

դ) կախարան, ընդատուն․ ռադիո—հեռախոս․

ե) ջրաման հաստատարանի վրա եռացրած սառը ջրի համար ու ջրեռոց․

զ) համապատասխան գրականություն, դիագրամներ, պլակատներ, կանոնագրքեր, շաշկի, շախմատ և պահարան այդ բոլորը պահելու համար․

է) անհրաժեշտ քանակով ճաշի ու թեյի ամանեղեն (կոնք—րակ, կերակրի ամաններ, թեյամաններ, դդալներ և այլն), փոքրիկ պահարաններ ամանեղենը, մթերքները պահելու համար, աղբարկղ և թքամաններ․

ը) կլեյոնկով պատած բազմոցներ (դիվաններ) այնպիսի հաշվով, վոր բավականացնեն պահակի հերթական փոխի հանգստացող կազմին․

թ) սուլիչներ՝ յուրաքանչյուր պոստին յերկու սուլիչ հաշվով և պարաններ նրանց ախտահանման համար․

ժ) քողարկ—խալաթներ, յուրաքանչյուր դրսի պոստի համար յերկու խալաթի հաշվով․

լ) ներսի ու դրսի ջերմաչափեր․



խ) վանդակ շենքի մուտքի առջևում վոտքերը սրբելու համար․

ծ) հրդեհաշեջ հրահանգ ու միջոցներ (հրաշեջեր, թիեր, ավազով տոպրակներ և այլն)։

Բացի դրանից, ձմեռը՝ թաղիքի վոտնաման (վալենկա) յուրաքանչյուր դրսի ու չտաքացվող շենքի ներսի պոստի համար յերկու զույգի հաշվով։

3․ Պահակապետի ու նրա ոգնականի սենյակում գտնվում են․

ա) պոստերի պլանը (սխեման), պահակապետի ու նրա ոգնականի հրահանգը․

բ) սեղան, ժամացույց, բազմոց և անհրաժեշտ քանակով աթոռներ։

գ) հրապաշարների (փամփուշտների) անհրաժեշտ քանակ․

դ) գրաֆին խմելու ջրի համար․

ե) ճաշի ու թեյի ամանեղեն ու պահարան այդ ամանեղենը պահելու համար․

զ) կախարան․

ը) թքաման․

թ) հեռախոսային ու նշանաբարային ապարատ կայազորի պահակների (զորամասի) որապահի ու պոստերի հետ կապի համար։

4․ Շենքերի մաքրման, տաքացնելու ու լու—

սավորության համար պահպանի տնօրինության տակ գտնվում են. ավելներ, խոզանակներ, կացին, թի, լաթ, ավազ (թեփ) մուտքերի ու սանդուղքների վրա ցանելու համար, ինչպես նաև վառելիքի ու լուսավորության նյութերի անհրաժեշտ պաշար:

5. Բոլոր դրսի պոստերում դրվում են պոստային բուդկա-զոնտեր, տեղավորելու համար պոստի տեխնիկական սարքավորումը (հեռախոս, նշանարարություն), իսկ դաշտային պահպանության ժամանակ (պահեստներ, պոլիգոններ, աերոդրոմներ և այլն) հատուկ պատուհաններ խրամատներում:

6. Յուրաքանչյուր դրսի, ինչպես նաև ներսի (չտաքացվող շենքերում) պոստերում գտնվում են ձմեռը մի-մի պոստային բրեզենտի տաք գրատ կամ մուշտակ, իսկ ամառը (դրսի պոստերում) մի-մի բրեզենտի թիկնոց:

7. Պահակատան ու պոստերի մատակարարումը կահավորման, լուսավորության, տաքացնելու, կապի ու մաքրման իրերով կատարվում է այն հիմնարկների ու զորամասերի կողմից, որոնց իրավասության տակ գտնվում են պահպանության օբյեկտները:



8. Պոստերի սարքավորման ժամանակ հարկավոր է ելնել հետևյալ պահանջներից.

ա) լավ տեսածիր ժամապահի համար.

բ) դասավորության ծածկվածություն (քողարկում).

գ) պոստերի առջևում ընկած խոչընդոտների (բնական և արհեստական) լավագույն օգտագործում և գիշերով դեպի պոստերը տանող մատույցների լավ լուսավորություն:

---

«Հաստատում եմ» — Հավելված № 6

«———»————— 1930 թ. — 48-րդ հոդվ. առթիվ

## ՑՈՒՑԱԿ

№ պահեստին կից պահակատան գույքի

| Առարկաների անունները | Առար-կայի քանակը | Քանակն ու այլ հատկանիշները | Ծանոթություն |
|---|---|---|---|
| Սեղաններ — — — | 2 | 2×1 մետր | |
| Աթոռներ — — — | 6 | վենսկի | |
| Բազմոցներ — — — | 1 | կաշվե | |
| Պահարան ամսնեղենի ու հացի համար — | 2 | բարձ. 1½ մ. | |
| Սրկղեր հրապաշարը պահելու համար — | 1 | | դռնակն ան-տարքին |
| Բուրժ — — — — | 2 | 27 ընից | |
| Էլեկտրակ. լամպեր — | 3 | 2 հատ 50 և 1-ը 16 մոմ. | |
| Նավթի » — | 1 | | |
| Բաժակ — — — | 2 | | |
| Ըմպանակ — — — | 25 | | |
| և այլն | | | |

Քաղաքի պարետ (կամ զորամասի հրամանատար)
(ստորագրություն)



Հավելված № 7
139 հոդվ. առթիվ

## ՊԱՀԱԿԱՆՆԵՐԻ ՊՈՍՏԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

### 1) Բլոկ-պոստ

Բրոկ-պոստի (չարժական պոստի) պարանը (տրոս) պետք է ձգված լինի յերկու ծառերի միջեվ (գծանկար № 1) յերկու սյուների միջեվ (№ 2) կամ սյան ու ծառի միջեվ (գծ. № 3)։

Պարանի յերկարությունն է 20-ից մինչև 80 մետր, հաստությունն է 0,6 մինչև 0,9 սմ., պարանի ծայրերն ամրացվում են անմիջապես ծառերի կամ սյուների մոտ։ Վորպեսզի չունը չխաթաթվի ծառի կամ սյան մոտ պարանի վրա սարքում են սահմանափակիչներ սյունից կամ ծառից 3 մետր հեռավորության վրա (գծ. № 4)։

Սահմանափակիչ ծառայում է փայտի մի կտոր պարանի յերկայնքով շարժվող ողից մեծ չափով, վորն ամրացվում է 0,3 մինչև 0,5 սմ. յերկաթալարով։

Պարանի վրա հագցնում են 8սմ. տրամագծով կլոր յերկաթից ող (ա), վորն ունի նույնպիսի յերկաթից 0,6 սմ. տրամագծով ողակ (բ), ողակն ազատ պտտվում է ողի անցքում։ Շղթան հագցր-

նում են վերին ծայրով կեռով օղակին, կեռը կիպ ծռում են ու զոդում: Շղթան ձիակապերի շըղթայից է 1,5-ից մինչև 2 մետր յերկարությամբ: Շղթայի ներքին ծայրը ծառայում է շանն ամրացնելու համար, յերբ նա դրվում է բլոկ-պոստի վրա: Բլոկ-պոստը սարքվում է հետևյալ ձևով. շղթայի ծայրից 30-սանտիմետրի վրա զոդվում է 0,6 սմ. տրամագծով կլոր յերկաթից պատրաստված օղ, վորի ծայրին ամրացնում են նույնպես յերկաթից պատրաստված ախլակ (№ 6): Յերբ ախլակը (ողլակը) հագցնում են օղակին շունը վզկապից ամուր պահվում է բլոկի մոտ:

Պարանի վրայով շարժվող ողի օղակն այն նըպատակն ունի, վոր արգելում է շղթայի ոլորվելուն, յերբ շունը կատարում է իր ծառայությունը: Թույլատրվում է շղթայի մեջտեղում նույն նպատակով պատրաստել լրացուցիչ օղակ շղթան ոլորվելուց ավելի մեծ չափով պաշտպանելու համար:

Պարանը պետք է այնպես ձգված լինի, վոր մեջտեղից կատարած մարդու մարմնի ճնշումից նա 1,5 մետրից ավելի չիջնի: Պարանի բարձրությունը գետնից չպետք է 2,5 մետրից ավելի լինի:

Բլոկի թիկունքային կողմում, յերբ չկան ծառեր, հարկ յեղած դեպքում խփում են մեկ-յերկու





ցից՝ հաջորդ պոստերի շներին կապելու համար, յերբ հերթական շանը դնում են պոստի վրա:

Սյան հաստությունը պետք է լինի վոչ պակաս քան 0,2 մետր, իսկ ծառինը 0,15 մետր:

## 2) Անշարժ պոստ

Գետնից 0,5 մետր բարձրության վրա, 1 մետր խորությամբ խփում են սյուն, կամ աղոցում են ծառ. սյան տրամագիծը պետք է լինի վոչ պակաս քան 0,2 մետր, իսկ ծառինը 0,15 մետր: Հողը սյան շուրջն ամուր տոփանում են:

Սյան վերի ծայրին կենտրոնում ամրացնում են ազատ պտտվող մի շրջան 30 սմ. տրամագծով՝ յեզրին մի անցքով ամրացնելու համար շղթայի ողն օղակով:

[illegible]ը կտրվում է 0,8 սմ. հաստության յերկաթե թիթեղից կամ հարմարեցնում են սայլակի մի անիվ, վորի ականոցը սյան վրա դրվող կողմից կտրվում է (գծ. № 7):

Շղթայի հարմարանքի ամրացումը և շան կարգումը պոստի վրա կատարվում է նույն կերպ, ինչպես բլոկային ծառայության ժամանակ, ըստ վորում շղթան կարելի յե կարճացնել մինչև 1 մետրի չափ: Նայած պարագային և չափից դուրս ակտիվ շների համար շղթայի մեջտեղին դնում են



զսպարանձև զսպանակ, շան խեղդումներից պաշտպանելու համար:

Անշարժ պոստի հարկավոր է դիմել բացառիկ դեպքերում, աշխատելով հաստատել թեկուզ կար-




ճացրած բլոկ-պոստ:

Ծանոթություն. Պահակաշների շարժական ու անշարժ պոստերի սարքավորումը

նայած յեղած միջոցների առկայության ու բնույթին կարող է լինել և այլ ձևի, սակայն անպայման պահպանելով այն կանոներն ու պահանջները, որ մատնանշված են «ԲԳԿԲ ռազմա-ծառայական շների օգտագործման ու շնաբուծական ձեռնարկում 1929 թվի)»: Իսկ այստեղ բերված են սարքավորման ամենից տիպիկ յեղանակները:

———





# ՄԱՏՅԱՆ

Ռազմապահեստի պահպանության համար պահակաշների վերակարգի

№..................

Սկսված է..................

Վերջացած է__________

| Պահակակետի №-ը | Շան անունը | Շնապանի անունն և ազգանունը | Պահակակետ տեղադրելու ժամը | Ստուգման ժամանակին ու շների աշխատանքի արդյունքը | Եղանակի դրությունը | Շանը պոստից հեռացնելու ժամանակը | Շան աշխատանքը ստուգող անձի ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Մորից | Միխեյեվ Պյոտր | $20^{30}$ | 0.1.04.30 $20^{45}$ ազդվում է 80 մետրից | Քամի. ամպամած | 5 ժամին | Դասակետ. հրամանատար՝ Ռժևսկի |
| 4 | Կուչում | | $20^{45}$ | 1 ժ. ազդվում է 40 մետ. | » » | » | |
| 5 | Տերեկ | | $20^{50}$ | $1^{55}$ ազդվում է 20 մետր. | » » | » | |
| 6 | Նարզան | | $20^{55}$ | $20^{30}$ ազդվում է 100 մետրից. չի վերցնում կերը գետնից | » » | » | |
| 7 | Ալաբաշ | Պավլովսկի Սերգեյ | $20^{40}$ | 3 ժ. ազդվում է 50 մետ. | Անձրև քամու հետ | » | Պահակների պետ՝ Յերշով |
| 8 | Կարա-պաս | | $20^{45}$ | | | | |

Պահակապետ — Կովալյով
02.04.30

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ա) 1, 2, 3 սյունակները լրացնում է շների սարքա բաժանմունքի պետը (Ջոկատ-Ջոկերամատարը)

բ) 4 սյունակը լրացնում է պահակապետը շները պոստերի վրա կարգելիս, իսկ 7-ը՝ հեռացնելիս

գ) 5, 6, 8 լրացնում են շների աշխատանքը ստուգող անձինք



5204—5



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ I.

### ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ:


1. Պահակային ծառայության նշանակումը . . . 5
2. Վերակարգ ու վերահսկողություն . . . . . 6
3. Նշանաբառ ու անցաբառ . . . . . . . . 8


## ԳԼՈՒԽ II.


Ա. Պահակային ծառայության փաստացի կատարումը առուզեղու համար նշանակված անձանց իրավունքները ու պարտականությունները

1. Կայազորի պահակների որպսան ու նրա ոգեւոկանը . . . . . . . . . . . 10

Բ. Պահակ.

1. Պահակների կազմակերպումը . . . . . . 14
2. Պահակների զինավորումը . . . . . . . 17
3. Պահակների ստորադասումը . . . . . . 19
4. Պահակների փոխելը . . . . . . . . . 20
5. Կարգը պահակատանը . . . . . . . . 26
6. Պահակի գործողության պատրաստվելը . . . 29

7. Պահակների ստուգումը . . . . . . . . . 30
8. Պահակատունն այն անձանց թույլ տալը, որոնք չեն պատկանում պահակի կազմին . . . . 32
9. Դեպի պահակի կողմից պահպանվող պահարան-ները թույլտվությունը դրամական գումար-ներ ու գույք դնելու ու հանելու համար . . 33
10. Դետքեր ու գաղոնքներ . . . . . . . . 36

Գ. Պոստ

1. Ընդհանուր դրություններ . . . . . . . 40
2. Ժամապահների փոխելը . . . . . . . . 42

Դ. Պահակի անձնական կազմի իրավունքներն ու պարտականությունները

1. Պահակապետ
ա) Ընդհանուր իրավունքներն ու պարտականու-թյունները . . . . . . . . . . . 45
բ) Պահակապետի պարտականությունները դեպի պահեստարանները թույլտվության ժամանակ . 51
գ) Պահանցին կից պահակապետի պարտակա-նությունները . . . . . . . . . . 55
2. Պահակապետի օգնականը . . . . . . . 57
3. Փոխադիր (պահակի ջոկի հրամանատար) . . . 58
4. Ժամապահ . . . . . . . . . . . 61

ԳԼՈՒԽ III.

ՊԱՀԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱ-ՆԱԿ (ՎԵՐԵՐԿՐՅԱ ՅԵՎ ՕԴԱՅԻՆ) ՅԵՎ ՀՐԴԵՀԻ

1. Ընդհանուր դրություններ . . . . . . . 66



Публ. библиотека ССРА им. А. Мясникова

2. Պահակի գործողությունը հարձակման ժամանակ . 70
3. Պահակի գործողությունը օդային [illegible] ազդա-նշանով . . . . . . . . . . . . . 72
4. Պահակի գործողությունը օդային տագնապի ազդա-դանշանով . . . . . . . . . . . . . 73
5. Պահակի գործողությունը հրդեհի ժամանակ . . 75

ԳԼՈՒԽ IV

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱԿԱՅԻՆ ՇՆԵՐՈՎ.

1. Ընդհանուր դրություններ . . . . . . . 77
2. Շներով պահակային ծառայության կերը և պա-հակի հետ համատեղ գործակցության ձևերը . 80
3. Խուզարկու շուն . . . . . . . . . 86

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Պահակային վերակարգի ցուցակի որինակ . . 88
2. Պոստերի ցուցակի որինակ . . . . . . . 90
3. Դեպի պահակի կողմից պահպանվող պահեստարա-նը թույլատվության որինակ . . . . . . 92
4. Պոստային տեղեկագրի որինակ . . . . . . 93
5. Պահակատան ու պոստերի սարքավորում . . . 99
6. Պահակատան գույքի ցուցակը . . . . . . 104
7. Պահակային շների պոստերի սարքավորում . . 105
8. Պահակային շների վերակարգի մատյան . . . 111
9. Դաշտային պահպանության կազմակերպման սխե-ման . . . . . . . . . . . . . . 114

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0212367

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

41. 613